առնիջիք առ նա. ներելով առնել զպա-
տուհասն. գիտասջիք թէ և նոցա և ձեր
տեր գոյ յերկինս. և ակնառութիւն ոչ գոյ
առաջի նր ։
10 * Ա՛յսուհետև զօրացարուք տերամբ, և
զօ

կարողութիւն նոր։ * Եւ զգեցարուք 11
զսպառազինութիւնն այ. զի կարօղ լինիք
ջնջել կալ ընդդէմ հնարից սատանայի։
* Ո՛չ է մեզ պատերազմ ընդ մարմնով 12
և ընդ արեան. այլ ընդ իշխանութիւնս, և ընդ
պետութիւնս, և ընդ աշխարհակալս խա-
ւարիս այսորիկ՝ ընդդ այսս չարութիւն՝ որ
ի՛ն երկնից։
* Վասն այսորիկ առէք զսպառազինու- 13
թիւնն այ. զի կարօղ լինիցիք ի դիմի
հարկանել չարին յաւուրն չարութեան։
* Եւ իբրև զամենայն ինչ կատարիցէք, 14
հաստատուն կացէք. զտեղի կալջիք պըն-
դեալ զմէջս ձեր ճշմարտութիւն. և զգե-
ցեալ զդերհան արդարութեան. * և ապու- 15
ցեալ զոտս պատրաստութիւն աւետարա-
նին խաղաղութեան։ * Եւ ի վերայ ամե- 16
նայնի առէք զվահանն հաւատոց. որով
կարօղ լինիջիք զամենայն նետս մուխս
չարին շնջուցանել։ * Եւ առէք զսաղա- 17
ւարան փրկութեան, և զսուսեր հոգւոյն՝
որ է բանն այ։ * ամենայն աղօթիւք և 18
խնդրուածովք՝ աղօթս առնել յամե-
նայն ժամանակի հոգւով։ և՝ինոյն տը-
նիջիք ամենայն ժուժկալութեամբ՝ և խըն-
դրուածովք՝ վասն ամենայն սրբոց։ * և 19
վասն իմ. զի ինձ տացի բան ի բանալ
բերանոյ իմոյ, համարձակութեամբ յու-
յանել զխորհուրդ աւետարանին. * վա՛ 20
որոյ պատգամաւորիմ կապանօքս. զի նո-

վինն համարձակեցայց , որպէս և պատ-
21 իցէ ինձ խօսել ։ * Խայց զի գիտիցէք և
դուք զինէն, զինչ գործիցեմ· զամենայն
ինչ ցուցցէ ձեզ տիւքիկոս սիրելի եղ
բայր՝ և հաւատարիմ պաշտօնեայ ի տր ,
22 * զոր առաքեցի առ ձեզ դնին երկ · զի
գիտասջիք դուք զմինջ , և մխիթարես
23 ցէ զսիրտս ձեր ։ * Խաղաղութիւն ընդ
եղբարս , և սէր հաւատովքն Հանդերձ
24 յայ ի Հօրէ՝ և ի տնէ յիսուսէ ։ * Շնորհք
ընդ ամենեսեան՝ որք սիրեն զտէր մեր յի-
սուս քս ան ապականութեբ · ամէն ։

Կաղ է փեսոսէս՝ գրեցաւ ի հռովմ ի ձեռն
տիւքիկոսի ։

ԹՈՒՂԹ
ՊՕՂՈՍԻ ԸՆԴՀԱՆՐԱՑՈՅ
ԱՌ ՓԻԼԻՊԵՑԻՍՆ ։
ԳԼ. Ը.

ԺԿ

ՕՂՈՄ ԵՒ ՏԻՐՈՒ 1
Թէոս Ծառայ յԻսի քրիստ ամ
ենայն սրբոց ի քաղաքն որ են ի
Կողմանս փիլիպեցւոց , և ե-
պիսկոպոսակցօք և սարկաւագօք ։ * Շ 2
նորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յԱստուծոյ
Հօրէ մերմէ՝ և ի Տէր Յիսուս Քրիստոս ։ * Կո հանամ 3
զԱստուած իմում ի վերայ ամենայն յիշատակաց ձերոց ,
* յամենայն ժամ յամենայն խնդրուածս իմ՝ վասն 4
ձեր ամենեցուն առնել աղօթս խնդու-
թեամբ ։ * վասն հաղորդութեան ձերոյ ընդ- 5
առաքելութեանն ։ յօրէ յառաջնումէ մինչև
ցայժմ ։ * Ո համահ եմ յայդ , թէ որ ընդ- 6
կսաւն ի ձեզ զգործս բարեաց՝ կատա-
րեսցէ մինչև յօրն Յիսուսի քրիստոսի ։ * ոյզ իրաւ- 7
իսկ թուի ինձ խորհել զայս վասն ձեր ա-
մենեցուն ։ վասն ունելոյ ինձ զձեզ ի սրտի
ի կապանս իմում ։ և ի պատասխանա-
տուութեան իմում ։ և ի հաստատուն առ-
աքելութեանն , կցորդս ինձ ընդհաց զձեզ ա-
մենեսեան լինել ։ * Ո կայ ես ինձ ածի , որպ 8

անձկացեալ եմ առ ձեզ ամենեսեան գը-
9 թովքն քրի յն ։ * Այլ զայն աղօթս առ
նեմ, զի սիրն ձեր ևս քան զևս առաւել
լեցի՛ ի գիտութիւնէ և յամենայն զգա-
10 * լնարել ձեզ զլաւն՝ զի իցէք հաստա-
տունք՝ և առանց դայթագղուե՛ ի յա-
11 ուրն քրի ։ * լցեալ պտղովք արդարու-
թե՛ ի ձեռն յն քրի՛ ի փառս և գովեստ ՅԳ
12 * Կամիմ զի իմացէք եղբարք ։ զի որ
ինչ վն իմ էր, ևս քան զևս ի յառաջա-
13 դիմութի՛ աւետարանին եկն, * մինչև կա-
պանաց իմոց յայտնի լինել ի քս յամե-
նայն հրապարակի և առ այլս ամենե-
14 սին, * և առ բազումս եղբարս ի տր ։ որ
վստահ են կապանօքս իմովք՝ առաւել
ևս համարձակել՝ առանց երկիւղի զբանն
15 այ խօսել ։ * Ոմանք առ նախանձու և
հակառակութե՛, և ոմանք մտադիւրու-
16 թե՛ խակ զքն քարոզեն։ * և ոմանք ի սի-
րոյ ։ քանզի գիտեն՝ եթէ ի պատասխա-
17 նատուն աւետարանին կամ։ * և ոմանք
առ հեստուե զքն պատմեն, այլ ոչ սրբ-
բութ ։ քանզի համարին նեղուիս յարու-
18 ցանել ի վրայ կապանաց իմոց ։ * Այդ
այս զի՞նչ է ։ որով օրինակաւ և խդխ, և
թէ պատճառանօք՝ և եթէ ճշմարտութ,
քն պատմի, և ընդ այս խնդամ, այլ և ու-
19 րախ ևս եղէց ։ * Զի գիտեմ եթէ այս
պահն ինձ ի փրկուի ի ձերոց խնդրուա-
ծոց, և ի պարգևաց Հոգւոյն յն քրի ։

* ըստ

20 * ըստ ակնկալութե՛ն և յուսոյն իմոյ • զի
ա՛ի իւ՛իք չամօթ եղէց • այլ համարձա-
կութի՛ն ոպ և յայժմաւ, և այժմ մե-
ծասցի քո՛ ի մարմնի իմում, եթէ կե-
21 նաք՝ և եթէ մահու։ * Օ՛ի ինձ կեանք
22 քո՛ է, և մեռանիլ շա՛հ։ * Ա՛պա եթէ
կեանքս մարմնոյ՝ այս ինձ պտուղ գոր-
ծոյ է • և զի՞նչ ընտրեցից՝ զայն ո՛չ գի-
23 տեմ։ * Ա՛ղեղեալ եմ յերկոցունց՝ զցան
կանլ, եղանիլ և ընդ քո՛ւ լինել՝ առաւել
24 քա՛ւ համարիմ։ * և կալ մնալ աստէն ի՛
25 մարմնի, կարևոր ևս վա՛ ձեր։ * Ա՛յս զայս
յուսացեալ գիտեմ, եթէ կացից՝ և մնա
ցից ամենեցուն ձե՛զ, ի՛ ձեր վարդապետ
26 և ուրախ լինել ի՛ հաւատս • * զի պար-
ծանք ձեր առաւել լիցին ի՛ քո՛ւ յիս ինձ ի՛
Ղ Ջ միւսանգամ գալստեան իմում առ ձե՛զ։
27 * Միայն թէ արժանի առեւտրականին քրիս-
տո՛սի գնայցէք։ զի եթէ գայցեմ, և տեսանի
ցեմ զձե՛զ • և եթէ հեռի իցեմ, և լսի-
ցեմ զձե՛ննջ • զի հաստատուն կայցէք ի՛
միոյ հոգւոյ, և միով հնչմամբ նահատակիցք
28 ի՛ հաւատս աւետարանին • * և մի՛ զան-
գիանայք, և մի՛ իւ՛իք ի՛ հակառակորդ-
սց անտի, որ է նոցա հանդէս կորստեան •
29 և ձերոյ փրկութե՛ան։ * Ա՛ռ այդ՝ շնո՛րհ է,
որ ձեզ շնորհեցաւ վա՛ք քրիստո՛սի, ո՛չ միայն ի՛
30 նա հաւատալ՝ այլև վա՛ն նո՛ր չարչարիլ։
* զնոյն պատերազմունեալ զոր իմն տե-
սիք, և այժմ լսէք յինէն։

ԳԼ. Ի։

1 Ա՛րդ՝ եթէ սխիթարութի՛ւն ինչ իցէ ի՛ քր՛ս, եթէ սփոփութի՛ւն սիրոյ՝ եթէ հաղոր-
դութի՛ւն Հոգւոյ, եթէ գթութի՛ւն և ողոր-
2 մութի՛ւն ։ * լցէ՛ք զիմդուխս իմ, զնո՛յն խոր-
հի՛ւրք, զնո՛յն սէր ունելով, հա-
3 մաձա՛յնք միախորհուրդք ։ * ա՛մի՛ ինչ ըստ
գրգռուե՛ան, և ա՛մի՛ ինչ ըստ սնապարծու՛ե ։
այլ խոնարհութի՛ւն զմիմեանս լաւ համա-
4 րել առաւել քան զանձինս ։ * ա՛մի՛ զան-
ձանց և եթ գիտել՝ այլ իւրաքանչի՛ւրոք
5 զընկերին ։ * Զ՛այն խորհեցի՛ր իւրա-
6 քանչի՛ւրոք ի՛ ձէ՛նդ, որ և՛ի քրիստ՛ոս ։ * որ
ի՛ կերպարանս այ՛ է, ոչինչ յափշտակու-
թի՛ւ համարեցաւ զլինելն հաւասար այ՛ ։
7 * այլ զանձն ունայնացոյց՝ զկերպարանս
ծառայի առեալ, ի՛ նմանութի՛ւն մարդ-
կան եղեալ՝ և կերպարանօք գտեալ իբ-
8 րև զմարդ ։ * խոնարհեցոյց զանձն, լեալ
հնազանդ մահու՛ մինչ՛ և մահու խաչի ։
9 * Ո՛ւստի որոյ և զա՛ծ զնա առաւել բարձ-
րացոյց ։ և շնորհեաց նմա անուն՝ որ ի՛
10 վե՛ր է քան զամենայն անուն ։ * Զ՛ի յանուն
յիւ քո՛ի ամենայն կրկնեսցի՛, երկնա-
11 ւորաց՝ և երկրաւորաց՝ և անդրերկրեայ-
ոք ։ * և ամ՛ լեզու խոստովան
լեսցի՛, թէ տէր է յ՛ս քրիստ՛ոս ի փառս այ՛ հօր ։
12 * Ո՛յսոյհետև սի՛րեելիք իմ՝ որպէս յամենայն ժ.Զ
հնազանդեցարուք, ա՛մի՛ միայն ի գալս-

աեւան իմում , ապ աուաւեր ևս այժմ՝
յորժամ հեռիս եմ՛ի ձէնջ , ահիւ և
դողութիբ զանձանց փրկուսի գործեցէք։
* զի ՅԱԾ է՝ որ յայղոէ՛ի ձեղ զկամէրն 13
և զառնելն վո հաձոուե ։ * ՕՅամ ինչ 14
գործեցէք առանց տրտնջելոյ և քրթմն
ջելոյ ։ * զի եղիջիք անբիծ և անարատք՝ 15
որդիք ՅՈՅ , անմեղք՛ի մէջ կամակոր և
խեղաթիւր ազգին ։ յորոց միջի երևիք
ձեք իբրև լուսաւորք յաշխարհի ։ * ընդ 16
բանն կենաց ունել յանձինս՝ ՛ի պար
ծանս ինձ յաւուրն քրիս՝ զի ոչ ընդունայն
ինչ ընթացայ՝ և ոչ ընդունայն վաստա
կեցի ։ * Ա՛յլ թէպետ և նուիրիմ՛ի 17
մըն պատարագի և պաշտաման հաւատոց
ձերոց , խնդամ և ուրախանամ եամ ամե
նեցուն ձեր ։ * նոյնպէս և դուք խնդա 18
ցէք և ուրախակից եղերուք ինձ ։ * Ա՛ւայց 19
յուսամ՛ի ՏԸ ՅՈ , զիմոթէոս վաղվա
ղակի արձակել առ ձեզ ։ զի և ինձ սըր
ատի դիւբ լինիցի , յորժամ գիտիցեմ ինչ
զձէնջ ։ * ՉՕ ի ոչ զոք ունիմ հաւասարունչ՝ 20
եթէ ընտանեբար հոգայցէ վասն ձեր ։
* զի ամենեբին զանձանց խնդրին , և ոչ 21
զՅՈՅ քրիս ։ * Ա՛ւայց զիտուրձ նոր գիտէք զի 22
դուք ։ զի իբրև որդի հօր ծառայեաց ընդ
իս յաւետարանին ։ * Ա՛յդ՝ զոս ակնու 23
նեմ արձակել՝ ոսպ նոյն հետայն զանձնէ
սուտ գիցեմ ։ * այլ յուսացեալ եմ՛ի ՏԸ՝ 24
թէ և ես իսկ ընդ հուսպ եկից ։ * Ա՛ւայց 25

լաւ Համարեցայ զԵպափրոդիտոս զեղ-
բայր՝ և զգործակից և զընկերաւորակից
իմ, զձեր առաքեալ, և զպաշտօնեայ ի-
26 մոց պիտոյից՝ առաքել առ ձեզ։ * Քանզի
զի և ինքն խակ յոյժ անձկացեալ է տե-
սանել զամենեսեան զձեզ, և հոգայր, զի
27 ձեր լուեալ էր թէ խօթացաւ։ * Եւ ար-
դարև խօթացաւ մերձ ի մահ, այլ ող-
ոջորմեցաւ Նմա, ոչ Նմա միայն, այլ և
ինձ՝ զի մի՛ տրտմութիւն ի վր տրտմութեան
28 կրիցեմ։ * Արդ՝ փութապէս յղեցի զնա,
զի տեսեալ զնա միւսանգամ ուրախ լի-
նիցիք, և ես առանց տրտմութեան եղէց։
29 * Ընկալջիք զնա ի տր տամբնդունել, և
զայնպիսիսն առ պատուականս ունիջիք։
30 * զի վասն գործոյ տեառն մինչև ի մահ մեր-
ձեցաւ, գուն գործեալ ոգւովք չափ։
զի լցցե զձեր պակասութիւն իմոյ սպասա
ւորութեան։

վ. ջ.

ԳԼՈՒԽ Գ։

1 Վերջապէս եղբարք իմ, ուրախ լե-
րուք ի տր։ զնոյն գրել առ ձեզ ինձ
ոչինչ դանդաղելի է, և ձեզ կարի զգու-
2 շալի։ * Օ զգոյշ եղերուք ի շանց անտի։
զգոյշ եղերուք ի չար մշակաց անտի։
զգոյշ եղերուք ի կրճատութենէ անտի։
3 * Օ ի թլփատութիւն մեք եմք, որ հոգ-
ւովն տեառ պաշտեմք։ և պարծիմք ի քրիստ,
4 և ոչ ի մարմնին պանծացեալ եմք։ * Թէ-

պէտ և ես իսկ զնոյն վաստահուի ունիմ
5 ՚ի մարմնի , եթէ ոք համարիցի այլ ազգ
վստահ լինել ՚ի մարմին, առաւել ևս ես։
* Թլփատուեալ ութօրեայ , յազգէ Իսրայէլ ,
՚ի ցեղէ բենիամենի . եբրայեցի յեբ-
6 րայեցւոց . ըստ օրինացն փարիսեցի. * ըստ
նախանձայոյզն լինելոյ հալածէի զեկե-
ղեցին . ըստ արդարութեան օրինացն լեալ
7 անարատ ։ * Այլ որ ինչ ինձ շահ էր ,
8 զայն սնեալ համարիմ վասն քրիստոսի ։ * այլ
և համարիմ իսկ զամենայն սնեալ՝ վասն
առաւել գիտութեան յաւի քրիստոս Յի-
սուսի տեառն իմոյ , վասն որոյ զամենայնի զրկեցայ՝ և համարիմ
9 կղկղանս , զի զքրիստոս շահեցայց , * և գտայց
ՙի նմա , իբրև ոչ եթէ ունիմ զարդարու-
թիւն՝ որ յօրինացն անաւէտ՝ ունելիմ, այլ
զհաւատացն քրիստոսի , որ յայ արդարութիւնն
10 է . * հաւատովք ճանաչել զնա՝ և զզո-
րութիւն յարութեան նորա՝ և զհաղորդութիւն
տառապանաց նորա , կերպարանակից լե-
11 նել մահու նորա. * թէ ոք հասից ՚ի մեռե-
12 ելոցն յարութեան ։ * Ոչ եթէ արդէն
առեալ իցէ , կամ արդէն կատարեալ ի-
ցեմ . զհետս մնեալ եմ թէ հասից , մա-
նաւանդ թէ ըմբռնեալ իսկ իցեմ ՚ի քրիս-
13 տոսէ ։ * Ա՛ղբայրք՝ ես ոչ համարիմ զանձն
իմ թէ հասեալ իցեմ . բայց մի ինչ է՝
զի զառ ՚ի յետոյն մոռացեալ է , և ՚ի
14 յառաջադէմն նկրտեալ եմ ։ * ուշ ե-
դեալ՝ ընթանամ ՚ի կէտ կոչմանն այ ՚ի

15 քո կա՛ց ։ * Ա՛յսուհետև որ միանգամ կաց
տարեալքդ եք՝ զայս խորհեցարուք ։ և
եթէ այլ ազգ ինչ խորհիցէք՝ սակայն և
16 զայն ձեզ յայտնեսցէ ։ * Այլ զոր
ժամանեցաքս՝ զայնմ խորհել՝ և սմին կա-
17 նոնի միաբան լինել ։ * Ընդմանօղք լինիմ
եղբարք՝ և դիտասջիք զայնպիս
սիան որ այնպէսն գնայցեն , ոյք ունիքդ
18 զմեզ ձեզ օրինակ ։ * Ո՛ի բազումք
գնան, զորոց բազում անգամ ասէի ձեզ.
բայց արդ և լալով խոկ ասեմ զքէնասէրս
19 խաչին քրիստոսի. * որոց կատարածն կորուստ
է ։ որոց ՚ի որովայնն իւրեանց է , և
փառք ամօթին իւրեանց , որք զերկրաւորս
20 և եթէ խորհին ։ * Ա՛յլ մեր առաքինու-
թիւն երկինս է, ուստի և փրկչին ակն ու-
21 նիմք՝ տէն յիսուս քրիստոս. * որ նորոգեսցէ զմարմին խոնարհութեան մերոյ՝ կերպարանակից լինել մարմնոյ փառաց իւրոց , ըստ զօրութեան՝ առ ՚ի կարօղ լինելոյ հպատակեցուցանել ընդ իւրեւ զամ։

ԳԼՈՒԽ Գ։

1 Ա՛յսուհետև եղբարք իմ սիրելիք և
անձկալիք , ուրախութիւն իմ , և
պսակ ։ այսպէս հաստատեցէք ՚ի
2 տէր՝ սիրելիք ։ * Ո՛ևոդիա աղաչեմ, և
զսինտիք աղաչեմ, զի նոյն խորհել ՚ի տէր ։
3 * Ա՛յո աղաչեմ և զքեզ՝ մտերիմ իմ և
ընկակից , և դու օգնական լինիջիր նոցա՝

որք յաւետառանձին նահատակեցան ընդ
խս կղեմաւ հանդերձ՝ և այլովք գործակ
ցօք իմովք • որոց անուանքն են ՚ի գիրս
Թէ կենաց : * Ուրախ լերուք ՚ի տէր յամ 4
ժամ • դարձեալ ասեմ՝ ուրախ լերուք :
* Հեզութիւն ձեր յայտնի լեցի առ մարդ 5
կան • տէր մերձ է : * Ոչ ՚ի ինչ հոգայք • 6
այլ առ ամենայն իրաւ խնդրուածովք, գո
հութիւն, խնդրուածք ձեր յայտնի լեցին
առ Աստուած : * Եւ խաղաղութիւն այն՝ որ ՚ի 7
վեր է քան զամ միտս, պահեսցէ զսիրտս
ձեր և զմիտս ՚ի քրիստոս յիսուս :
ԼԿ * Վասն եզրափակ՝ որ ինչ ճշմարիտ 8
տուիթք է՝ որ ինչ պարկեշտութիք, որ ինչ
արդարութիք, որ ինչ սրբութիք, որ ինչ
սիրով, որ ինչ համբաւ բարեաց, որ ինչ
քաջութիք, որ ինչ գովութիք՝ զայն խոր
հիջիք : * Զոր ուսարուքն, և ընկալա 9
րուք, և լուայք՝ և տեսէք յիս, զայն ա
րարիք • և Աստուած խաղաղութիք եղիցի ընդ
ձեզ : * Ուրախ եղէ ես ՚ի տէր յոյժ • զի 10
և դուք զմնացաւ ածիք հոգալ ինչ վն իմ՝
որպէս և հոգայիքն • բայց բարբարիք
լիմն է : * Ոչ թէ ասեմ կարօտութեանն ինչ ա 11
սեմ • զի ես ուսայ որովք կարեմ բաւա
կան լինել : * Գիտեմ նուազել, գիտեմ 12
առատանալ, յամի ամենևին խնամուա
եմ, և յագել՝ և քաղցնուլ, և առատա
նալ՝ և նուազել : * Յամի կարօղ եմ, ով 13
նոյ՝ որ զօրացուցն զիս : * Բայց բարւոք 14

արարէք՝ զի կցուրդ եղերութ ինձ ի նե-
15 ղութեան ։ * Ուխտէք և դուք փիլիպեցիք,
զի ի սկզբան աւետարանին իբրև ելի
ես ի մակեդոնիա , և ոչ մի եկեղեցի
հաղորդեաց ինձ յաղագս տուոյց և առն
16 լոյ , բայց միայն դուք ։ * զի և ի Թեսա-
ղոնիկ՝ միանգամ և երկիցս զպէտս իմ
17 եառնք բերէր ։ * Ոչ թէ եղէծ խնդրեմ
պտուղն , այլ խնդրեմ զպտուղն որ յա-
18 ճախէ ի բան ձեր ։ * Ունի իմ առեալ զամ,
և առաւելեալ եմ ։ ընկալայ՝ և լի եմ ի
ձեռն եպափրոդիտեայ , որ է ի ձէնջ
հոտ անուշից՝ պատարագ ընդունելի՝ հա-
19 ճոյ ացի ։ * Աստուած իմ լի արասցէ զամ
պէտս ձեր ըստ հարստութեան նորա փա-
20 ռաւք ի քրիստոս ։ * Ումեմն և հօր մերում
փառք յաւիտեանս յաւիտենից ։ ամէն ։
21 * Ողջոյն տայջիք ամենեցուն ի քրիստոս ։ * Ող
22 ջոյն տան ձեզ՝ որ ընդ իս են եղբարքն ։
23 * Ողջոյն տան ձեզ ամենայն սուրբք ։ մանա-
24 ւանդ որ ի տանէ կայսեր են ։ * Շնորհք
տէրն յիսուսի քրիստոսի ընդ ոգւոյդ ձերում ։ ամէն ։

ԱՀա թէւղէպեցիս՝ գրեցաւ ի հռովմէ ի ձեռն
եպափրոդիտոսի ։

ԹՈՒՂԹ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼԱՑ
ԱՌ ԿՈՂՈՍԱՑՍ ԱՃԻՍՆ։

ԳԼ. Ը.

ԱԲ

ՕՂՈՍ ԸՆԴՐԿԱԼ 1
Յի՛ քո՛ի կամօքն ՝այ , և տի՛ 2
մեթէոս եղբայր ։ * առ կո՛ 2
ղոսացին սուրբս և հաւա՛ 3
տացեալս եղբարս ՝ի քո՛ ։ * Շ նորհ՛ք ընդ
ձեզ և խաղաղութի՛ յայ հօրէ մերմէ՝ (և
՝ի տո՛ն յի՛ք քո՛ե) ։ Պարհանայք զայ և ըղ
հօրէ տո՛ն մերոյ յի՛ք քո՛ի , յայմ ժամ վա՛
ձեր աղօթս առնեմ ։ * խոստո՛վ ըղ 4
հաւատան ձեր՝ որ ՝ի քո՛ յա՛ տո՛ր մեր , և ըղ
ա՛ն որ ընդ ամենայն սո՛ւրս ուն՛իք ։ * վասն 5
յուսացն որ պահի ձեզ յերկինս ։ զոր
մէ լսե՛ալ բանի՛ն ճշմարտութե՛ան ա՛
ւետարանին , * որ եհաս առ ձեզ ։ որպէս 6
ընդ ամենայն աշխարհ աճէ և պտղաբե
րէ ։ որպէս և ՝ի ձերո՛ւմ միջի ։ յօրէ յոր
մէ լսե՛ալ՝ և ճանաչեալ զշնորհան այ
ճշմարտութե՛ան ։ * ոպ և ուսո՛ւցաք յեպափ 7
րասայ սիրելւոյ ծառայակից մերմէ , որ է
հաւատարիմ վասն ձե՛ր՝ պաշտօնեայ քո՛ի ։
* որ և պատմեաց մեզ զձեր սէրն հոգ 8

9 ասէ։ * Ա՛ն այնուհետեւ եւ մեք յօրէ յօրէ
մէ լուսաւք՝ ոչ դադարեմք վասն ձեր աղօ
թըս առնել՝ եւ խնդրուածս մատուցա
նել. զի լնուցուք զգիտուն կամացն նո՛ր,
ամենայն իմաստութեամբ եւ հոգեւոր հան
10 ճարով. * գնալ ձեզ արժանի տէ՛ր յամե
նայն հաճութիւն, յամենայն գործս բա
րութեան պտղաբերք եւ աճեցուն՛ք գի
11 տութե՛ն աստ. * ամենայն զօրութեամբ զո
րացեալք ըստ զօրութե՛ն փառաց նորա.
յամենայն համբերութիւն եւ երկայն
մտութի՛ւն։
12 Ա՛ւրախութեամբ * գոհանալ պա՛տ հօրն՝ որ ԱՓ
կոչեցաւ զձեզ ՚ի մաս վիճակի սրբոցն
13 ՚ի լո՛յս. * որ փրկեաց զմեզ յիշխանութե՛ն
խաւարի, եւ փոխեաց զմեզ յարքայութի՛ն
14 որդւոյն իւրոյ սիրելւոյ։ * որով ունիմք
զփրկութի՛ն արեամբն նո՛ր, եւ զթողութի՛ն
15 մեղացն՝ մարմնոյն նո՛ր. * որ է պատկեր ա
նեռնութե՛ն աստ, անդրանիկ ամենայն
16 արարածոց։ * Զի նովա՛ հաստատեցաւ
ամենայն, որ ինչ յերկինս՝ եւ որ ինչ յերկ
րի, որ երեւին՝ եւ որ ոչն երեւին. եթէ
աթոռք, եթէ տէրութի՛ւք, եթէ պետու
թի՛ւք, եթէ իշխանութի՛ւք. ամենայն ինչ
17 նովա՛ եւ ՚ի նմա հաստատեցաւ։ * Եւ
նա է յառաջ քան զամենայն, եւ ամե
18 նայն ինչ նովա՛ եկաց զօրանդակ։ * Եւ
նա է գլուխ մարմնոյ եկեղեցւոյ. որ է
սկիզբն, անդրանիկ ՚ի մեռելոց, զի է

19 ղնցի ինքն յամի յառաջացեալ։ * Օ՛ի՛
նմա հաձեցաւ ամենայն լրումն աձումն
20 բնակել։ * և նովաւ հաշտեցուցանել
զամենայն ի նմին ։ արար խաղաղութի՛
արեամբ խաչին իւրոյ, որ ինչ յերկրի՛ և
21 որ ինչ յերկինս ։ * Եւ զձե՛զ որ երբեմն
օտարացեալս էիք , և թշնամիք խորհր֊
22 դովք ի գործսն չարութե՛ն ։ այժմ ա֊
ւադիկ հաշտեցոյց անդամովք մարմնոյ
իւրոյ ի ձեռն մահու իւրոյ , յանդի֊
մանն կացուցանել զձե՛զ սբս՝ և ամբիծս՝
և անարատս առաջի նո՛ր ։ * եթէ կայցէք 23
ի հաւատսն արմատացեալք և հաստա֊
տեալք ։ և անշարժք ի յուսոյ աւետա֊
րանին՝ զոր լուայտուք քարոզելոյ ընդ ամե֊
նայն արարածս ի ներքոյ երկնից ։ որոյ
եղէ ես պօղոս պաշտօնեայ ։

Ա՛ի

* Եւ արդ՝ ուրախ եմ՛ի չարչարանս իմ 24
վե՛ր ձեր ։ և լնումս զպակասութի՛ նեղութեանցն
քրիստոսի ի մարմնի իմում վե՛ր մարմնոյ նո՛ր՝ որ
է եկեղեցի ։ * որոյ եղէ ես պօղոս պաշ֊ 25
տօնեայ՝ ըստ տնտեսութե՛ն այլ , որ տուեալ
է ինձ ի ձեզ կատարել զբանն այլ ։ * զըզ 26
խորհուրդն՝ որ ծածկեալն էր ի յաւի֊
տեանցն և յազգաց՝ որ այժմ յայտնեցաւ
սրբոց իւրոց ։ * Ումոց կամեցաւ աստ ցու֊ 27
ցանել , թէ զինչ է մեծութի՛ փառացն
խորհրդոյն նո՛ր ի հեթանոսս , որ է քրիստոս ի
ձեզ՝ յոյս փառացն ։ * զոր մեք քարո֊ 28
զեմք ։ և խրատեմք զամենայն՝ և ու֊

սուցանեմք զամենայն մարդ ամենայն
հոգեւոր իմաստութիւբ ։ զի կացուսցուք
զամենայն մարդ կատարեալ ՚ի քս յի ։
29 * յոր և աշխատիմ պատերազմեալ ըստ
յաջողութեբ նորա՝ որ յաջողեալ է յիս
զօրութիբ ։

Գ Լ ։ Բ ։

1 Կամիմ զի գիտիցէք դուք՝ որպիսի ՚ճիգ
ունիմ յանձին վս ձեր՝ և վս
լաւդիկեցւոցն , և որոց չիցէ տեսեալ
2 զերեսս իմ մարմնով ։ * ՚Ո ի մխիթարես
ցին սիրտք նց տեղեկացեալք սիրով ։ և
յամենայն մեծութիբ լրութիբ իմաստու
թեբ ՚ի գիտութիբ խորհրդոցն ՚այ (հօր) ,
3 ՚ի քս յի ։ * յորում ՚ամ գանձք իմաստու
4 թեբ և գիտութեբ ծածկեալ կան ։ * ՚Այլ
զայս ասեմ , զի մի՛ ոք զձեզ զառանցու
5 ցէ պատիր բանիւք ։ * ՚Ո ի թէպէտ և
մարմնով հեռի եմ , այլ հոգւով ըստ ձեզ
եմ ։ խնդամ՝ իբրև տեսանեմ զկարգն
ձեր՝ և զհաստատութի՛ հաւատոցն ձերոց
6 որ ՚ի քս յի ։ * ՚Որ՝ ոպ ընկալարուք զքս
7 յի զՏր , նովին գնասջի՛ք ։ * արմատա
ցեալք և շինեալք ՚ի նա , և հաստատա
եալք ՚ի հաւատս , որպ ուսարուքն՝ ա
ռատեսեալք ՚ի նմին գոհութիբ ։

Վ Ջ

8 * ՚Ո գ՚այլ լերուք՝ մի՛ ոք իցէ որ զձեզ կո
ղոպտիցէ ձարտասիսուբ՝ և մնոտի խա
բէութիբ , որք ըստ մարդկան աւանդու՛ն՝

և ըստ տարերց աշխարհիս՝ և ոչ ըստ յա՛յ
քո՛ն։ * զի՛ ի նմա բնակէ ամենայն լրումն 9
աստուածեղէն մարմնապէս ։ * և դո՛ւք 10
նովաւ լցեալք՝ որ է գլուխ ամենայն իշ
խանութե՛ և պետութե՛ ։ * որով և թլփատե՛ 11
ցարուք հա՛ւատովք զանձեռագործ թլփ
փատութի՛ն՝ ի մերկանալ զանգամն մարմ
նոյ թլփատութի՛ն քո՛ւոյ ։ * թաղեալք ընդ 12
նմին՝ ի մկրտութե՛ն՝ որով և ընդ նմին յա
րեայք հա՛ւատովք՝ ոյ ազդեցութե՛ն՝ որ
յարոյց զնա՛ ի մեռելոց ։ * և զձե՛զ որ 13
երբեմն մեռեալս էիք՝ ի մեղս և յանթլ
փատութի՛ն մարմնոյ ձերոյ՝ կենդանացոյց
յանձին իւրում՝ ընդ որ ամե
նայն յանցանս մեր ։ * և ջնջեաց զձեռա 14
գիր մեղացն հակառակութե՛ն հրամանագրի
իւրովք՝ որ կայր մեզ հակառակ՝ եբարձ
զայն՝ ի միջոյ՝ և բե՛ւեռեաց ընդ խաչափայ
տին ։ * և՝ երկեաց զիշխանութի՛ս և զպե՛ 15
տութի՛ս՝ յայտ յանդիման խա՛չատուակեաց
նշուակե՛լ զնո՛ս յանձին իւրում՝ ի յարու՛
իւրում ։ * և՝ ի ոք այսուհետև զձե՛զ դա՛ 16
տեսցի՝ ուտե՛լով կամ ըմպե՛լով՝ կամ մա՛
սամբք տօնից կամ նորամուխք կամ շաբա
թուց ։ * որ են ստուերք հանդերձելոցն ։ 17
այլ մարմինն քո՛ւ է ։ * և՝ ի ոք զձե՛զ խաբեսի 18
ցե՛ ՝ որ կամիցի խոնարհութե՛ն և կրօնիւք
չի՛ շահակաց՝ զոր չիցե՛ տեսեալ զքահա
յարե՛լ տարտապատ հպարտացե՛լ՝ ի մտաց
մարմնոյ իւրոյ ։ * և ոչ ունիցի զգլուխն 19

քո , ուսաի ամենայն մարմինն յօդիւք և
խաղալեօք տարաբերեալ և խառնեալ՝
20 աճէ զաճումն ոյ ։ * Լթէ մեռարուք
ընդքո՛ի՝ տարերց աշխարհիս՝ զի՞ւս իբրև
զկենդանիս առաքն յաշխարհի կրօնաւո-
21 րիք ։ * Այ՛ մերձենալ , ա՛ի՛ ձայնակեր , ա՛ի՛
22 հուպ լինիր ։ * որ է ամենայն ինչ՛ի պետս
ապականութեանն , ըստ պատուիրանաց և
23 վարդապետութեանն մարդկան ։ * որ չիմաս
տութի՛ն իմն ունին , ինքնակամ կրօ-
նիւք և խոնարհութի՛ւն և անխնայութի՛ւն
մարմնոյ ։ և ո՛չ՛ի պատիւ ինչ լրութեան
մարմնոյ ։

Գ.Լ. Գ.

1 Լթէ յարերուք ընդքո՛ի , առա՛ զվերինն
խնդրեցէ՛ք , ուր քո՛ն նստի ընդաջմէ
2 ոյ ։ * զվերինն խորհեցարո՛ւք , ա՛ի՛ զայս
3 որ յերկրի աստ է ։ * Վանգն մեռարուք՝
և կեանքն ձեր ծածկե՛լ են ընդքո՛ի յԱ՛ծ ։
4 * իսկ յորժամ քո՛ յայտնեսցի՝ կեանքն
ձեր , յայնժամ և դուք ընդնմա յայտնես
5 ջիք փառօք ։ * Սպանէ՛ք այսուհետև զան-
դաման ձեր զերկրաւորս ։ ի բաց ընկեցէ՛ք
զպոռնկութի՛ւն զպղծութի՛ւն զերի՛ զցանկութի՛ւն
չարեաց , և զագահութի՛ւն՝ որ է կռապաշ
6 տութի՛ւն ։ * վա՛ որոց գայ բարկութի՛ւն ոյ՛ի
7 վա՛ր որդւոցն անհաւանութե՛ան ։ * որով՛ք և
դուք երբեմն գնայիք՝ մինչ կենդանիքն
8 էի՛ք ի նո՛ս ։ * Ա՛րդ՝ ի բաց թօթափեցէ՛ք
և

և դուք զայն ամ, զբարկուն զսրտմտուն
զչարուն զհայհոյուն, զանեղկատակուն
ի բերանոց ձերոց։ * Ա՛ի առեք միմեանց։ 9
վերկացարուք զնին մարդն գործովքն իւ
րովք։ * և զգեցարուք զնոյն նորոգեալ 10
ի գիտուն ըստ պատկերի արարչին իւրոյ։
* ուր ոչ է հրեայ՝ և ոչ հեթանոս, թլփ 11
փատուածի՝ և անթլփատուածի, խուժ
դուժ՝ սկիւթացի՝ ծառայ՝ ազատ։ այլ
ամենայն և յամենայնի քս։ * Պ՚զգեցա 12
րուք այսուհետև իբրև ընտրեալք սո՛
սուրք և սիրեցեալք՝ զգութ ողորմու
թի՝ զբաղցրութի՝ զխոնարհութի՝ զհե
զութի՝ զերկայնմտութի։ * ներեալ միմեանց, 13
ընդհակառակ իրերաց։ եթէ ումեք
քէն տրտունջ լինիցի ումեք։ որպէս ած քրիս
տոս ներեաց ձեզ՝ նոյնպէս և դուք։ * Այս 14
ի վերայ այսր ամենայնի զսէրն, որ է զօդ կա
տարման։ * և խաղաղութիւնն քրիստոսի 15
տատեսցի ի սիրտս ձեր, յոր և կոչեցա
րուքն միով մարմնով։
ԱԼԲ Այս գոհացօղք լինիջիք։ * զի բանն քրիստոսի 16
բնակեսցէ ի ձեզ առատապէս։ ամ ի
մտառութիւն ուսուցանել և խրատել զմի
մեանս։ սաղմոսիւք և օրհնութիւք և եր
գովք հոգևորօք՝ և շնորհօք օրհնել ի
սիրտս ձեր զած։ * Այս զամ զոր և առ 17
նիցէք բանիւք և արդեամբք, զամենայն
յանուն տեառն յիսի արասջիք։ գոհացօղք
լինիջիք զայ և զհօրն նովաւ։ Կանայք՝ 18

Հնազանդ լերուք տրանց ձերոց , ոչ և
19 վայել է ի տէր ։ * Ա՛րք սիրեցէք զկանայս
20 ձեր, և մի՛ դառնացուցանէք զնա ։ * Ա՛ր-
դիք՝ հնազանդ լերուք ծնողաց ձերոց յա-
ճեցեալն՝ զի այն է հաճոյ առաջի տեառն ։
21 * Իսկ դուք՝ մի՛ զայրացուցանէք զորդիս ձեր,
22 զի մի՛ տրտմեսցին ։ * Ծառայք՝ հնա-
զանդ լերուք տերանց ձերոց յամենայն ա-
ռ ակնեկ ծառայութեան՝ իբրև մարդահա-
ճոյք , այլ սրտիամտութեամբ սրտի երկնչել ի
23 տէնէ ։ * Զոր ինչ առնիցէք՝ սրտի ամօթ
գործեսջիք իբրև տէն , և ոչ իբրև մարդ-
24 կան։ * գիտասջիք՝ զի ի տէնէ առնուցուք
զհատուցումն ժառանգութեանն ձերոյ . քզի
25 տէն քրիստոս ծառայէք ։ * Իսկ ապիրատն ըն-
կալցի զիւրում ապիրատութեն . զի չկայ
ակնառութիւն առաջի նորա ։

Գ Լ . Գ ։

1 Նոյնպէս՝ կիրաւունս և հնազանդութիւն
ծառայից ձերոց կնոցհիցէք . գիտաս
2 ջիք՝ զի և ձեր նոր գոյ յերկինս ։ * Ո՛ղ-
թիւց առեալ կացէք . աչխել ի նմին գո-
3 հութեան ։ * Ա՛ղօթս արարէք վիճգամանայն
և վն մեր , զի տէ բացցէ մեզ դուռն
բանին՝ խօսել զխորհուրդն քրիստոսի , վասն
4 որոյ և կապեալս կամ։ * զի յայտնի ա-
րարից զնա որպէս ժամն իցէ ինձ խօսել ։
5 * Ի մասատութ գնասջիք առ արտաքինան,
6 գնոյ առեալ ժամանակս . * և բանն ձեր

ցայժմ ժամ լի չնորհօք ես իբրև ապիւ
համեմեալ լեցի , գիտել ոչ արժան ի
ցէ ձեզ խրատանչիւրումեք տալ պա
տասխանի : * 7 Այլ որ ինչ զինէն էցեր՝
ցուցցէ ձեզ զայմ տիւքիկոս սիրելի եղ
բայր՝ և հաւատարիմ պաշտօնեայ՝ և ծա
ռայակից ի տէր : * 8 զոր առաքեցի առ ձեզ
դմին իրի , զի գիտասջիք վասն մերո . և
մխիթարեսցէ զսիրտս ձեր . * 9 ընեսիմոս
հանդերձ եղբարբ հաւատարմաւ և սի
րելեաւ՝ որ է ի ձէնջ . զայմ ինչ ցուցցեն
ձեզ՝ որ ինչ աստ է : * 10 Ողջոյն տայ ձեզ
արիստարքոս գերեկից իմ՝ և մարկոս եղ
բօրորդի բառնաբայ . վասն որոյ առէք
պատուէր՝ եթէ եկեսցէ առ ձեզ ընկալ
ջի՛ք զնա . * 11 և յիսուս՝ որ անուանեալն
է յոստոս , որք են ի թլփատուէ անտի :
զի դոքա միայն գործակից եղեն ինձ յար
քայութեն այ , որք և եղեն իսկ ինձ միխ
թարութի : * 12 Ողջոյն տայ ձեզ եպափրաս՝
որ ի ձէնջ ծառայ քրի՛ստոսի է . յամենայն
ժամ պատերազմեալ վա՛ձեր յաղօթս ,
զի կայցէք կատարեալք և լցեալք յամ
ման այ : * 13 Վկայեմ նմա , զի բազում
աշխատուէ ունի վասն ձեր , և վա՛ լաո
դիկեացւոցն , և վասն այնոցիկ՝ որ յիերա
պօլիան են : * 14 Ողջոյն տայ ձեզ ղուկաս
բժիշկն և սիրելի , և դեմաս : * 15 Ողջոյն
տայէք եղբարց՝ որ են ի լաւոդիկիայ և
նիմփայ , և որ առանին եկեղեցին է նո

16 րա ։ * Այլ յորժամ ընթեռնուցու առ
ձեզ թուղթդ՝ արասջի՛ք զի և՛ի լաւոդի
կեցւոց եկեղեցւոյն ընթերցցի ։ և զառ
՚ի լաւոդիկեցւոցն՝ զի և դուք ընթեռ
17 նուցուք ։ * Այլ ասասջի՛ք ցարք իպարս ։
զդիշ լեր սպասաւորութեդ՝ զոր ընկա
լար ՚ի տեր ։ զի զայդ կատարեսցես ։
18 * Ողջոյնդ ձեռին իմոյ պօղոսի է ։ յիշ
լեցին ձեզ կապանքս իմ։ Շնորհք ընդ
ձեզ ։ ամէն ։

Առ հռոմայեցս՝ գրեցաւ ՚ի հռովմէ ՚ի ձեռն
փիւրէնոսի և ունեսիմոյ ։

ԹՈՒՂԹ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼԱՑ
ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍՆ ԱՌ ԱՋԻՆ։

ԳԼ. Ա.

ԲԿ

ՕՂՈՍԼԻՍՊՂՈՒ 1
նոս և սիմէթէոս՝ եկեղեց-
ւոյդ Թեսաղոնիկեացւոց յԱծ-
հայր մեր և՛ի տէր յիս քս ։
* Շ նորհք ըս ձեզ և խաղաղութի ։ Կո՞ղ 2
հանումբ զնոյ յամէ ամ վասն ձեր ամե-
նեցուն՝ յիշատակ առնել յաղօթս մեր
անդադար ։ * յիշել զձեր գործն հաւա 3
տոց՝ և զվաստակ սիրոյ՝ և զհամբերութի
յուսոյ ձեր մերոյ յԱ՚ի քս՝ առաջի նոյ և
Հօր մերոյ ։ * Գ՚իտեք եղբարք սիրեցեալք 4
յԱ՚՝ զընտրութին ձեր ։ * զի աւետարան 5
մեր ոչ եղև առ ձեզ միայն բանիւ ՝ այլ
և զօրութբ՝ և Հոգւով սրբով և լրութբ
բազմաւ ։ ոպ և գիտեք իսկ՝ թէ որպի
սիք եղաբ ՚ի միջի ձերում վասն ձեր ։
* Եւ դուք նմանեալք մեզ և տն ՝ ընկա 6
լայք զբանն ՚ի բազում նեղութբ՝ խընդ
դութբ Հոգւոյն սբոյ ։ * լինել ձեզ օրի 7
նակ ամՀաւատացելոց ՝ որ են ՚ի մակե-

8 դումիա՝ և յաքայիա ։ * Օ՛ի՛ ինչ
ինչեաց բանն այ ։ ոչ միայն ի մահեդով
նիա և յաքայիա , այլ յամառելիս հա-
ւատքն ձեր որ առ ձեզ են՝ սփռեցան ։
զի այսուհետև ոչի՛նչ ե պիտոյ մեզ և
9 խօսել լինչ ։ * Օ՛ի նոքին իսկ պատմեն
վա՛ մեր , թե ո՛րպէս եղև մեզ մուտ առ
ձեզ· և ո՛ւր դարձայք առ ձե՛զ ի կուռց անց
ան , ծառայել այ կենդանւոյ և ճշմար-
10 տի ։ * և ակն ունել որդւոյ նր յերկնից ,
զոր յարոյցն ի մեռելոց զՅ՝ որ փրկելոցն
ե զմեզ ի բարկուե անտի որ գալոցն ե ։

ԳԼ· Ի·

1 Ա՛ուք ինքնին գիտէք եղբայրք զմուտն մեր առ ձեզ· զի ոչ ընդունայն լինչ
2 եղև ։ * այլ յառաջագոյն չարչարեալ և
ինամանել , ո՛ւր և դուք իսկ գիտէք ։
ի մէջ վիճակեցաւ համարձակեցաք առ
մեզով պատմել ձեզ զաւետարանն այ
3 մեծաւ պատերազմա ։ * Օ՛ի մխիթա
բութի՛ն մեր ոչ ի մոլորուե է՝ և ոչ ի պղծ
4 ծուե՝ և ոչ նենգուե ։ * այլ ո՛ւր ընտրեցաք
յայլ հաւատարիմ լինել աւետարանին ,
նոյնպէս և խօսիմք ։ ոչ իբրև մարդկան հա-
ճոյ լինել՝ այլ այ որ քննէն զսիրտս մեր ։
5 * Օ՛ի ոչ երբեք բանիւք ողջամտաց է
ղեաք առ ձեզ , ո՛ւր և դուք իսկ գիտէք ։
և ոչ ի պատճառս ագահուե , ո՛ւր և ած
6 վ՛այե ։ * և ոչ խնդրեաք փառս ի մարդ-

կա

կանէ, ոչ ի ձէնջ և ոչ յայլոց ։ * Կարօղ 7
եաք իբրև քրիստոսեայս ծանրանալ,
այլ եղեաք հեզք ի միջի ձերում. որպէս
դայեակ մի՝ որ սնուցանիցէ մանկունս.
* նոյնպէս և մեք գթայաք ի ձեզ ։ Հա- 8
ճոյ թուէը մեզ տալ ձեզ ոչ միայն զաւե
տարանն այլ և զանձինս մեր. քանզի
սիրելիք մեր եղերուք ։ * Յիշէք եղբարք 9
զվաստակն մեր և զջան. զի զցայգ և ըղ
ջերեկ գործեաք վասն չծանրանալոյ ու
մեք ի ձէնջ. և քարոզեաք ձեզ զաւե
տարանն այլ ։ * Վկայ ենքնին վկայէք՝ և 10
աստ, ոսպ սրբութիւն և արդարութիւն և ամբե
ծութիւն՝ ձեզ հաւատացելոցդ եղեաք. * ոսպ 11
և գիտեք իսկ. զի զնուրաքանչիւրոք ի
ձէնջ՝ իբրև հայր զորդիս՝ * մխիթարեաք 12
և սփոփեաք. և դնեաք վկայութիւն գնալ
ձեզ արժանապէս այլ, որ կոչեացն զձեզ
ի իւր արքայութիւն և ի փառս ։ գ.
* Վ ա՛ յնորիկ և մեք գոհանամք զայն ա- 13
պաւա՛ զի առեալ զլուր բանին այ առ ի
մէնջ՝ ընկալարուք, ոչ իբրև զբան մարդ
կան, այլ ոսպ ճշմարտիւ զբան այ. որ և
յաջողեալ իսկ է ի ձեզ հաւատացեալդ ։
* Զ ի դուք նմանողք եղերուք եղբարք՝ 14
եկեղեցեացն այ՝ որ են ի հրէաստանիք ի
քս յս. զի զնոյն չարչարանս չարչարեցայք
և դուք ի ձերոց ազգականաց, ոսպ և նո
քան ի հրեից. * որք և զտէրն յս սպանին՝ 15
և զմարգարէսն, և զմեզ հալածեցին, և
աստ

այ յաչսից եղեն · և ամմարդկան հակառ-
16 ուակ եղեն · * և արդելուին զվեղ խօսել
հեթանոսաց՝ զի ապրեսցին · զի կատա-
րեսցեն զմեղս իւրեանց յամէնժամ · բզկի
հասեալ է ՚ի վերայ նոցա բարկութիւնն
մինչև իսպառ ։
17 * Եւ զի մեք եղբարք՝ թէպէտ և որբ մնա- ԲՋ
ցաք ՚ի ձենջ առ ժամանակ մի , երեսօք՝
և ոչ սրտիւք · առաւել ևս փութացաք
տեսանել զերեսս ձեր մեծաւ ցանկութե ։
18 * Վ ան այսորիկ կամեցայ գալ առ ձեզ
ես պօղոս՝ միանգամ և երկիցս , և խա-
19 փանեաց զմեզ սատանայ ։ * Վ՚ասնզի ո՛վ է
մեր յոյս կամ խնդութի՛ւն կամ պսակ պարծա
նաց մերոց , եթէ ոչ դուք ՚ի նմա՝ առաջի
20 նն մերոյ յի՛ք քո՛ի ՚ի նորա գալստեանն ։
* զի դուք էք փառք մեր և խնդութի՛ն ։

Գ Լ · Գ ։

1 Վ ա որոյ ոչ ևս ունելիք ժոյժ , զի բար-
՝՝ւոք թուեցաւ մեզ միայն մնալ յա-
2 թենս ։ * Լ՚ու առաքեցաք զտիմոթէոս
զեղբայր մեր և ղպործակից աւետարա
նին՝ ՚ի և հօրն քո՛ի , հաստատել զձեզ՝
և մխիթարել վա՛ հաւատոցն ձերոց ։ ՎՋ
3 * Օ՛ի մի՛ տատակայցէք ՚ի նեղութե յայսո
սիկ · քանզի դուք ինքնին իսկ գիտէք ,
4 զի ՚ի սոյն կաւք ։ * Վ՚ասնզի մինչ առ
ձեզն իսկ էաք՝ յառաջագոյն ասէաք ձեզ
թէ նեղութիւնք հասանելոց են ՚ի վերայ
մեր ։

մեր • որպէս և եղև իսկ՝ և գիտացիք ։
* Ա ման զայնորիկ և ես զի ոչ ևս ունէի 5
ժամբ՝ առաքեցի դիտել զհաւատսն ձեր ։
գուցէ արդեօք փորձեց և զձեզ փորձիչն
և ընդունայն լինիցի ջանն մեր ։ * Ի հայգ 6
արդ՝ իբրև եկն տիմոթէոս ՚ի ձէնջ առ
մեզ, և ետ մեզ զաւետիս հաւատոցն ձե-
րոց և զսիրոյ , զի ունիք ՚ի մտի զմիշտ
տակս մեր բարեաց ցանկա-
ցեալ էք տեսանել զմեզ՝ նա և մեք զձեզ ։
* վ ա զայնորիկ միխիթարեցաք ՚ի ձեզ էղ 7
քարք՝ ՚ի վերայ ամ վշտացս և նեղութեց
ձերոց՝ ՚ի ձեռն հաւատոցն ձերոց ։ * զի 8
այժմ կենդանի եմք՝ եթէ դուք հաստա
տուն կայցէք ՚ի տէր ։ * Զ ի՞նչ կարեմք 9
գոհութիւն մատուցանել ոյ վ ա ձեր , ՚ի
վերայ ամենայն ցնծութենն , զոր ե՛ր
դամք վ ա ձեր առաջի յոյ մերոյ ։ * զ ոյգ 10
և զգերեկ առաւել և ա զաչեմք՝ տես
նել զերեսս ձեր , և հաստատել զպակա
սութիւն հաւատոցն ձերոց ։ * Ա յժ ինքն 11
ած և հայր մեր՝ և տէր մեր յ ի ք՝ ուղղես
ցէ զճանապարհս մեր առ ձեզ ։ * Զ ձեզ ըղ 12
ձեզ ինքն տէր բազմապատկեսցէ և առատեսցէ
զսէրն սիրով ընդ միմեանս և առ ամե
նեսին՝ որպէս և մեք ՚ի ձեզ ։ * Հաստա- 13
տել զսիրտս ձեր անարատս ՚ի սրբութիւն
առաջի աստուծոյ և հօր մերոյ՝ ՚ի գալուս
տեառն՝ ընդ մերոյ յ ի ք՝ ի հանդերձ ա
մենայն սրբովք իւրովք ։

ՊԻ. Գ·

ԳԿ

1 Ա.յսուհետեւ եղբարք՝ աղաչեմք զձեզ
եւ միխթարեմք ի քրիստոս · զի որպէս ընդ
կալարուք ի մէնջ, թէ որպէս պարտ իւ
ցէք ձեզ գնալ՝ եւ հաճոյ լինել աստ · որպէս եւ
գնացէք իսկ, զի եւս քան զեւս յաւելու
2 ցուք ի նոյն ։ * Այլ գիտէք՝ թէ որպիսի
3 պատուիրանս տուաք ձեզ ի տէրէ ։ * Զի
այս են կամք աստ , սրբութի ձեր · ի բաց
4 լինել ձեզ ի պոռնկութէ · * գիտել ի
ւրաքանչիւրումեք ի ձէնջ զինւր ամանն
5 ստանալ սրբութիւն եւ պատուով · * մի՛ ի
ցաւս ցանկութեան որպէս եւ այլ հեթա
6 նոսք՝ որ ոչ գիտեն զաստ ։ * Այլ զանցա
նել եւ զրկել յիւրում յաղագսի զեղբայր
իւր · քանզի վրէժ խնդիր է տէր ի վերայ ամի
այդոսիկ · որպէս յառաջագոյն ասացաք
7 ձեզ, եւ եդաք վկայութիւն ։ * Զի ոչ կո
չեաց զմեզ աստ ի պղծութի՝ այլ ի սրբու
8 թիւն ։ * Ա.յսուհետեւ որ անարգէ , ոչ
զմարդ անարգէ , այլ զաստ՝ որ եւ ետ զՀո
9 գին աստ ի ձեզ ։ * Ա.յլ վասն եղբայրա
սիրութեան՝ չէ ինչ պիտոյ գրել առ ձեզ ·
զի դուք ինքնին իսկ աստուածացեալ էք առ
10 ի զիմեանս սիրելոյ ։ * քանզի եւ առնէք
իսկ զդոյն յամենեղբարս որ են յամ կող
մանս մակեդոնիացւոց ։ Ա.ղաչեմք զձեզ
եղբարք՝ առաւել եւս առաւելուլ եւ ա
11 ռատանալ · հանդարտել , * եւ գործել
զիւ

զնուրաքանչիւր · և գործել ձեռօք ձե-
րովք, որպէս և պատուիրեցաք ձեզ, զի
գնայցէք պարկեշտութեամբ առ արտա-
քինան՝ և ոչ ի նուէից կարօտեալք իցէք ։
* Ա՛չ կամիմ եղբարք՝ եթէ տգիտք իցէք 12
վասն ննջեցելոցն · զի ոչ տրտմիցիք ոպ
և այլքն՝ որոց ոչ գոյ յոյս ։ * Ա՛յնմէ հա- 13
ւատամք՝ եթէ յն մեռաւ և յարեաւ ·
նոյնպէս և նոքա զննջեցեալսն ի ձեռն յն
ածցէ ընդ նմա ։ Ա.Ջ
* Ա՛յս զայս ասեմք ձեզ բանիւ ,եթէ մեք 14
որ կենդանիքս եմք մնացեալք՝ ի գալս
առնանն տեառն ոչ ժամանեմք ննջեցելոցն ։
* Ո՛ի ինքնին տէր հրամանաւ , ի ձայն 15
հրեշտակապետի և ի փող յն իջանէ յերկ
նից · և մեռեալքն ի քս յարիցեն յառա-
ջագոյն ։ * Ա՛պա և մեք որ կենդանեսցուք 16
մնացեալ իցեմք՝ նոքօք հանդերձ յափշ
տակեսցուք ամպովք ընդ առաջ տեառն յօդս ·
և այնպէս յամ ժամ ընդ տեառն լինիցիմք ։
* Ա՛յսուհետև մխիթարեցէք զիմեանս 17
բանիւքս այսոքիւք ։

ԳԼ ։ Ե ։

Գ Ա՛յլ ևս ժամուց և ժամանակաց եղ 1
բաւքք՝ չէ ինչ պիտոյ գրել առ ձեզ ·
* զի դուք ինքնին խակ ստոյգ գիտէք , 2
թէ օրն տեն իբրև գող գիշերի՝ այնպէս
հասանէ ։ * Ո՛րժամ ասիցեն թէ խա- 3
ղաղութի և շինութիւն է , յայնժամ յան-

կարծակի հասցէ նոցա սատակումն՝ ոյք և
4 երկին յղեալ, և մի ապրեսցին։ * Ա.Յիշատակ
եղբարք ունիք ի խաւարի, թէ օրն ձեր
5 իբրև զգող՝ ի վրայ հասանիցէ։ * զի ամե-
նեքեան դուք որդիք լուսոյ էք՝ և որդիք
առաւնջեան. չեմք գիշերոյ՝ չեմք խաւա-
6 րի։ * ապա մի՛ զքնով անկանիցիմք՝ ոյք և
այլքն, այլ արթուն եւ զուսարթունք եղի
7 ցուք։ * Ո.Իւ որ ննջեին՝ գիշերի ննջեին,
8 և որ արբենանն՝ գիշերի արբենան։ * այլ
մեք զի առաւնջեան եմք, արթուն եղի
ցուք, և զգեցցուք զզբաւհան հաւատոյ և
զսիրոյ, և զխցուք զսաղաւարան յուսոյն
9 փրկուե։ * Ո.Իւ ոչ եառ մեզ աճ՝ ի բար-
կութիւն, այլ՝ ի փրկութիւն կենդանուե՝ ի
10 ձեռն նո՛ն մերոյ Յիսուսի քրիստոսի։ * որ մեռաւն
վասն մեր. զի եթէ արթուն իցեմք՝ և
եթէ ննջիցեմք, նովաւ հանդերձ կեց-
11 ցուք։ * Ա.ասն որոյ մխիթարեցէք զմի-
մեանս, և շինեցէք զնիւսեաս՝ որպէս և
առնէիք իսկ։
12 * Ա.ղաչեմք զձեզ եղբարք՝ ճանաչել զգ
վաստակաւորս և զկերակացուս ձեր՝ ի
13 տէր, և զնախաձիս ձեր։ * և համարեցա
րուք զնա սիրով առաւել սիրոյ՝ վասն
գործոյ նոցա. խաղաղութի՛ ունիք ընդ մի-
14 մեանս։ * Ա.ղաչեմք զձեզ եղբարք՝ խրա
տեցէք զանհնազանդս, մխիթարեցէք զվա-
խամիտս, պատսպարան լերուք ակարաց,
երկայնամիտ լերուք առ ամենեսեան։

15 * Օ՛ դժոխք լերուք՝ գուցէ ոք չարին չար
հատուցանիցէ · այլ յամ ժամ զբարեաց
զհետ երթայք առ միմեանս և առ ամե-
16 նեսեան : * Յամենայն ժամուրեայ լե-
17 րուք : * անդադար աղօթս արարէք : * յա-
18 մենայնի դոհացարուք · զի այս են կամք
19 Աստ քրիստոսի ՚ի ձեզ : * Օ՛ հոգին մի՛ շիջ-
20 ջուցանէք : * զմարգարէութիւնս մի՛ արհա-
21 մարհէք : * Օ՛ ամենայն ինչ փորձեցէք ,
22 զբարին ընկալարուք : * յամենայն իրաց
23 չարաց ՚ի բաց կացէք : * Իւ ինքն Աստ-
ծոյ խաղաղութեան սուրբս արասցէ զձեզ համօ-
րէն · և բովանդակ ձեր ոգի և շունչ և
մարմին՝ անարատ ՚ի գալուստն Տեառն մե-
24 ծոյ յիսուսի քրիստոսի : * Հաւատարիմ
է՛ որ կոչեացն զձեզ , որ և արասցէ զնոյն :
25 * Իղբարք՝ աղօթս արարէք և՛ ՚ի մեր վե-
26 րայ : * Համբուրէք զեղբարս ամենե-
27 ցուն ՚ի համբոյր սրբութեան : * Իրդմնեցու-
ցանեմ զձեզ ՚ի տէր՝ ընթեռնուլ զթուղ-
թըդ առաքելն ամենայն եղբարց սրբոց :
28 * Շնորհք տեառն մերոյ յիսուսի քրիստոսի ձեզ :
ամէն :

ԱՀա ընթացանիցէք առաքելն ընդէր՝
Էրէցա յամենայն :

ԹՈՒՂԹ
ՊՕՂՈՍԻ ԱՌՔԱԼԱՅԻ
ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍՆ
ԵՐԿՐՈՐԴ։

ԳԼ. Ա.

ՕՂՈՍԻՆ ՍՂՈՒՄ ԴԿ

1 նոս և ախմոխեոս՝ եկե-
ղեցւոյդ Թեսաղոնիկեացւոց՝
յԱՀ Հօրն մերմէ և Տ֊ի ՅՍ
2 քսէ ։ * Շ նորհք ընդ ձեզ և խաղաղու-
թիւն յԱՀ Հօրէ մերմէ , և Տ֊ի ՅՍ քսէ ։
3 * Պարտիմք զայ յԱՀ ժամ
ամէն ձեր երջանիկ՝ որպէս արժան իսկ է ։
զի ևս քան զևս աճեն հաւատքն ձեր ,
և յաճախեսցէ սէր իւրաքանչիւր ամենեցուն
4 ձեր առ միմեանս ։ * Ինքեանս և մեք ձեռք
պարծել յեկեղեցիսն Ա֊ծ՝ վասն համբերու-
թեան ձերոյ և հաւատոյ՝ յամ հալածանս
ձեր և Տ֊ի նեղութիս , որում դուքն համբե-
5 րէք ։ * յօրինակ արդար դատաստանին
Ա֊ծ ։ արժանի լինել ձեզ արքայութեն Ա֊ծ ,
6 վասն որոյ և զձգնութիդ կրէք ։ * եթէ
պարտ է առաջի Ա֊ծ՝ հատուցանել նեղ֊
7 չացն ձերոց նեղուսն ։ * և ձեզ նեղեալոցդ
հանգիստ ընդ մեզ՝ ի յայտնուելն Տ֊ն մե֊

ըոյ յԻսի , յԵրկնից հրեշտակօք զօրութիւն
8 Իւրոյ : * Ի զոյ հրոյ առնուլ վկրկժա
յայնցանէ՝ այլ ոչ ձանաչեն զՅԾ , և որ
ոչ գնաղանդին աւետարանին Տն մերոյ
9 Յիսի (քիսի) : * որք տայցեն վճիժա՛ի սա
տակուծն յաւիտենից՝ յԵրեսաց Տն՝ և՛ի
10 փառաց զօրութիւն նր : * Յորժամ գայցէ
փառաւոր լինել՛ի սրբոց իւրոց , և
սքանչելի՛ի մեջ ամենայն հաւատացե-
լոց : զի հաւատարիմ եղև վկայութիւնն
11 մեր՛ի վր ձեր յաւուր յայնմիկ : * Որո և
աղօթս առնեմք վս ձեր յամենայն ժամ,
զի զձեզ արժանիս արասցէ կոչմանն Ե-
լուսաՅծ (մեր՝) ինչև լցցէ զՅամՀաձուլ
բարութե , և զգործս հաւատոցն զօրու-
12 թբ : * զի փառաւոր լինցի անուն Տն մե-
րոյ յԻսի քսի՛ի ձեզ՝ և դուք՛ի նմա , ըստ
շնորհացն Ա՛ստ մերոյ և Տն յԻսի քսի :

ԳԼՈՒԽ Ե

ԴԴ 1 Զաչեմ զձեզ ՅղբարբՔ՝ վս գալստեանն
Տն մերոյ յԻսի քսի , և մերոյ ժողո-
2 վելոյն առ նա : * մի՛ վաղվաղակի խռո-
վել ձեզ՛ի մտաց՝ և մի՛ զարհուրել , մի՛
հոգեառ և մի՛ բանիւ և մի՛ Թղթով իբ-
րև Թե՛ի մեջնջ : ոչ Թե եկեալ հասեալ
3 իցէ օրն Տն : * Ա՛ի ոք զձեզ խաբեսցէ
և մի՛ ի՛ նմին իրօք : զի եԹէ ոչ նախ եկեսցէ
ցէ ապստամբութիւն , և յայտնեսցի մարդ
դն անօրէնութե՝ որդին կորստեան ,

4 * Հակառակորդն հպարտացեալ՝ի վերայ
ամենայնի, որ անուանեալ իցէ Աստ, կամ
պաշտօն · մինչև նստել նմա՝ի տաճարին
Աստուծոյ, ցուցանել զանձն՝ թէ Աստ իցէ ·
5 * Ոչ յիշէք՝ զի մինչ առ ձեզն իակ էի՝ ա-
6 կէի զայս · * Եւ արդ դուք ընդդիմին գի-
տէք զայն՝ որ ունին յայտնել նմա իւրում
7 ժամանակի · * Ո՛չ խորհուրդն անօրէ-
նութեան արդէն իսկ զօրանայ · բայց միայն
ժամ մինչ՝ի միջոյ բարձցի՝ որ այժմ ու-
8 նի · * Եւ յայնժամ յայտնեսցի անօրէնն ·
զոր Տէր Յ սատակեսցէ հոգւով բերանոյ
իւրոյ, և խափանեսցէ յայտնութեամբ գալստե-
9 ութեանն իւրոյ · * Որոյ գալուստն ըստ ազ
դեցութեան սատանայի է, ամենայն զօրու-
թեամբ և նշանօք և արուեստիւք սուտք,
10 * և ամենայն պատրանօք անիրաւութեան
՝ի վերայ կորնչելոցն · փոխանակ զի զսէրն
ճշմարտութեան ոչ ընկալան՝ զի ապրեսցին,
11 և վասն այնորիկ առաքեսցէ նոցա Աստ ազ
դեցութիւն մոլորութեան՝ հաւատալ նոցա սուտ
12 թէն · * Ո՛չ դատապարտեսցին ամենեքեան՝ որ ոչ հաւատացին ճշմարտութեանն,
այլ հաճեցան ընդ անօրէնութիւն · * Եւ մեք պարտիմք գոհանալ զոյ յամենայն
ժամ վասն ձեր եղբարք սիրեցեալք՝ի Տէնէ ·
զի ընտրեաց զձեզ Աստ իսկ զսկզբանէ՝ի փրկու-
թիւն՝ սրբութեամբ հոգւոյն՝ և հաւատովքն
13 ճշմարտութեան · * յոր և կոչեաց զձեզ առ
աքարանաւն մերով՝ի փրկութիւն փառացն

ան մերոյ յամի քոյ։ * Ա.յսուհետեւ եկ 14
բարձր հաստատուն կացէք՝ եւ ոչինդ կա-
լարուք զաւանդութիւնն զոր ուսարուք ։
եթէ բանիւք եւ եթէ թղթով մերով։
* Ա.յլ ինքն ինքն տէր մեր յս քս եւ ած եւ հայր 15
մեր ։ որ սիրեացն զմեզ՝ եւ ետ մեզ միխ-
թարութիւն յաւիտենից՝ եւ յոյս բարեաց 16
շնորհօք ։ * միխիթարեսցէ զսիրտս ձեր՝ եւ
հաստատեսցէ յամ բանս եւ ի գործս
բարութեան ։

Գ.

Գ 2 Ա.յսուհետեւ եղբարք՝ աղաչեմ արարէք 1
ի վեր մեր ։ զի բանն տն ընթանայ
ցէ ։ եւ փառաւորի լինիցի յամ տեղիս՝ ոյ
եւ առ ձեզդ ։ * զի ապրեսցուք յանօրի- 2
նաց եւ յանզգամաց մարդոց ։ զի ոչ ամե-
նեցուն են հաւատք ։ * Ա.յլ հաւատա- 3
րիմ է տր ։ որ եւ հաստատեսցէ զձեզ՝ եւ
պահեսցէ ի չարէն անտի ։ * վստահ եմք 4
ի ձեզ տրամբ ։ թէ զոր պատուիրեցաքն
ձեզ ։ եւ առնէք՝ եւ առնիցէք ։ * այլ տր 5
ուղղեսցէ զսիրտս ձեր ի սէրն այ՝ եւ ի
համբերութիւն քրտ ։ * Պատուիրեմ ձեզ 6
եղբարք յանուն տն մերոյ յսի քրտի ։ խոր
շել ձեզ յամ եղբօրէ՝ որ ատահական գը
նայցեն ։ եւ ոչ ըստ աւանդութենն՝ զոր ըն-
կալարուք ի մէնջ ։ * Ո՞ի դուք ինքնին 7
գիտէք՝ թէ որպէս պարտ է ձեզ նմանել
մեզ ։ եւ ոչ եղեէք ատահակեցաք առ ձեզ ։

8 * և ոչ ձրի զուարճ հաց կերաք, այլ ջան-
նիւ և վաստակով գիշեր և ցերեկ գոր-
ծէիք՝ վասն չգանրանալոյ ուրեք ի ձեզնէ։
9 * Ոչ եթէ չունէիք իշխանուն. այլ զի
զանձինս օրինակ արասցուք ձեզ՝ նմա-
10 նօղս լինել մեզ։ * Զանազն միանգ դե-
առ ձեզն էաք՝ զայս պատուիրէաք
ձեզ, թէ որ ոչն կամիցի գործել՝ և կե-
11 րիցէ մի՛։ * Լուր՝ լսեմք զոմանց ի ձենջ՝
թէ ստահակութիւն գնան. գործ ինչ ոչ
գործեն, այլ յուսացեալ՝ հետաքրքիր
12 լինին։ * Ընդհանրացան պատուիրեմք տամք՝
և աղաչեմք ի տէր յիսուս քրիստոս, զի հանդարտու-
թիւք գործեսցեն՝ և զհուրեանց հաց կե-
13 րիցեն։ * Այլ դուք եղբարք՝ մի՛ ձանձ-
14 րանայք զբարիս գործել։ * Զպատ եթէ ոչ
ուրք հնազանդեսցի բանիս մերում թուղ-
թովք այդուիկ, դուք նշանակեսջիք զդ
նա, և մի՛ խառնակեսջիք ընդ նմա՝ զի պատ-
15 կասեսցէ։ * Բայց մի՛ իբրև զթշնամի հա-
մարիջիք՝ այլ խրատեսջիք իբրև զեղ
16 բայր։ * Ինքն տէր խաղաղութեան տա-
ցէ ձեզ խաղաղութիւն յամէն ժամ յամէն իրս։
17 Տէր ընդ ամենեսեան ընդ ձեզ։ * Ողջոյնս իմոյ
ձեռին պօղոսի է, որ է նշանակ. յամէն
18 թուղթս այսպէս գրեմ։ * Շնորհք տեառն
մերոյ յիսուսի ընդ ամենեսեան ձեզ. ամէն։

Ա՚ ընդառաջին ի ցիս էրիդրէ՝ զրեցաւ յաղի-
նաց։

ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔՅԱԼԻՑ

ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ ԱՌԱՋԻՆ.

ԳԼ. Ե.

ԿԿ

ՕՂՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ 1
յաի քաի ըս հրամանի փըրկ-
չին մերոյ ած՝ և քաի յաի յոս-
ասն մերոյ . * սիմնեթեայ 2
որդւոյ սիրելւոյ հաւատովք։ շնորհք ո-
ղորմութիւն խաղաղութիւն յայ հօրէ և՛ տէնէ
մերմէ յաէ քնէ։ * Որպէս աղաչեցի զք 3
քեզ կալ յեփեսոս՝ մինչ երթայինն՝ ի
մակեդոնիա . զի պատուիրեր տացես ո-
մանց չլինել օտարուսմունս, * և չհայել 4
յառասպելս և՛ ի տոհմաթիւս անչափս ,
որ մանուսանդ խնդիրս յուզեն , և ոչ
զանաեսուի այ հաւատովք։ * Վասնզի 5
գլուխ պատուիրանին սէր է, ի սրբ սըր-
տէ՝ և՛ ի մտաց բարեաց՝ և յանկեղծա-
ւոր հաւատոց ։ * յորոց ոմանք վրիպե- 6
ցան խոտորեալք յունայնութի բանից ,
* Կամին լինել վարդապետք օրինաց , ին- 7
քեանք ոչ իմանան զինչ խօսին՝ և ոչ վս
որոց պնդելն են։ * Գիտեմք՝ եթէ բար- 8
ուք են օրէնք՝ եթէ որ գնա օրինաբն կը-

9 թեացե ։ * Այլ զայս գիտասցե, զի՛ ի վե՛
րուրդարաց օրէնք ոչ կան, այլ՛ ի վե՛ ան օ՛
րինաց և անհնազանդից՝ ամբարշտաց և
մեղաւորաց՝ անսրբոց և պղծոց, զհայր
և զմայր անարգողաց, մարդասպանաց,
10 * պոռնկաց արուձագիտաց՝ մարդեղե՛
ղաց ստոց աներդմանց. և եթէ այլ ինչ
ինչ հակառակ ողջամիտ վարդապետու
11 թեան, * որ ըստ աւետարանի փառաց երա
նելոյն այ՛ ն, որում եղէ ես հաւատա՛
րիմ։
12 * Շնորհս ունիմ այնմիկ որ զօրացոյցն
զիս՝ ի քո՛ յա՛ ի սո՛ ր մե՛ ր. զի հաւատարիմ
համարեցաւ կարգել՝ ի սպասաւորու՛ թ
13 * ո՛ ր յառաջագոյն հայհոյիչն էի և հա՛
լածիչ և թշնամանիչ. այլ գտի ողոր՛
մութի՛ ն, զի զայն յանգիտութե՛ ն և յանհա
14 ւանութե՛ ն գործէի ։ * և առաւել եղեն շը՛
նորհք տէ՛ ն մե՛ ր հաւատովք՝ և սիրով՝
15 որ՝ ի քո՛ յա՛ ։ * Հաւատարիմ է բանն՝ և
ամենայն ընդունելութե՛ ն արժանի է, զի քո՛
յա՛ եկն յաշխարհ փրկել զմեղաւորս, ո՛ ր
16 րոց գլուխն ես եմ ։ * Այլ վա՛ ս այնորիկ
գտի ողորմութի՛ ն, զի նախ յիս եցոյց յա՛ քո՛
զամ երկայնմտութի՛ ն՝ յօրինակ այնոցիկ
որ հաւատալոցն իցեն՝ ի նո՛ ն՝ ի կեանն
17 յաւիտենից ։ * Այլ թագաւորին յաւ՛
իտենից՝ անեղծի և աներեւութի, միոյն
նմա՝ փառք և պատիւ յաւիտեանս յաւի՛
18 տենից, ամէն ։ * Զայս պատուիրան ա՛

ան

քանդեմ քեզ որդեակ իմ ոսկեթել ,
եւ կանխելոց ի քեզ մոլգարէութեան .
զի դու զինուորիցես նոքօք զգեղեցիկ զե-
նուրդն , * ուսինիցես հաւատս սրբով 19
մօք , զոր ոմանց մերժեալ յանձանց
խրեանց՝ նաւակոծեցան ի հաւատս .
* որոց սակի են հիմենոս՝ եւ ալէքսանդր 20
րոս , զորս մատնեցի սատանայի , զի խրա-
տեսցին չհայհոյել :

ԳԼ . Ե .

Եւ արդ՝ աղաչեմ նախ քան զամե՛ն , առ- 1
նել աղօթս՝ խնդրուածս՝ պաղա-
տանս՝ գոհութիւնս վասն ամենայն
մարդկան . * մանաւանդ վասն թագաւորաց և ամե՛ն 2
իշխանաց , զի խաղաղութիւն և հանդար-
տութիւն վարեսցուք զկեանս մեր , ամենայն
ածպաշտութիւն և սրբութիւն : * Օ՛ի այն է 3
բարի և ընդունելի առաջի փրկչին մե-
ծոյ Աստուծոյ . * որ զամենայն մարդիկ կամի զի կեց- 4
ցեն՝ և՛ ի դիտութիւն ճշմարտութեան եկեսցեն :
* Օ՛ի միւ է Աստուած , և միջնորդ Աստուծոյ և 5
մարդկան՝ մարդ Յիսուս , * որ եհա զանձն 6
փրկանս ընդ ամենեցուն՝ վկայութիւն ժամա
նակաց իւրոց . * յոր եդայ ես քարոզ և 7
առաքեալ , ճշմարիտ առեմ՛ի քրիստոս՝ և ոչ
սուտ , եղէ վարդապետ հեթանոսաց հա-
ւատով և ճշմարտութեամբ :
ԱՓ * Կամիմ զի արք կայցեն յաղօթս յամե՛ն 8
տեղիս , բառնայցեն գնա՛ձեռս՝ ի վեր ա-

9 ուանց բարկուե՛ և երկմտուե՛ ։ * Լցընդ
և կանայք՝ ի զարդ խոնարհուե՛ ամենա
ծուքբ և զգաստութբ զարդարել զան
ձինս · ոչ՝ ի հիւս ոսկեմանս ընդ ել՛ու
զեաս մարգարտով, կամ՝ ի հանդերձս
10 պաճուճեալս։ * այլ ոգի վայելէ կանանց՝
զոհ պաշտութբ յանձնառելոց գործովք
11 բարուե՛ ։ * Կին մարդ ցած՛ութբ ուսցի
12 ամ՛ հնազանդուե՛ ։ * Ո՛չ ուսուցանել
կնոջ մարդոյ ոչ հրամայել՝ և ոչ ձո
խաբան լինել քան զայր մարդ · այլ՝ ի
13 լռուե՛ կալ ։ * Ո՛ ի ադամ նախ ստեղ
14 ծաւ՝ և ապա հեւայ ։ * Եւ ադամ ոչ
պատեցաւ՝ այլ կինն պատեցաւ և յան
15 ցեաւ · * բայց կեցցէ վասն որդեծնու
թեանն՝ եթէ կացցեն ի հաւատս և ի
սէր և ի սրբութի պարկեշտութբ ։

Գ Լ · Գ ·

1 Հաւատարիմ է բանս · եթէ ոք եպիս
կոպոսուե՛ ցանկայ՝ բարւոյ գործոյ
2 ցանկայ ։ * Պարտ է եպիսկոպոսին անա
ղարտ լինել, միոյ կնոջ այր, հեզ՝ ցած՛
3 պարկեշտ՝ հիւրասէր՝ ուսուցիչ ։ * ոչ՝
թիւնամանող, ոչ՝ հարկանող, այլ հան
դարտ · ոչ՝ կռուող, ոչ՝ արծաթասէր ·
4 * զի իւրում տանն խոկ բարւոք վերակա
ցու լեալ իցէ · որդեակս ունիցի, որ՝ ի
հնազանդուե՛ կացցեն ամ՛ պարկեշտուե՛ ։
5 * Ո՛պա եթէ ոք իւրում տանն վերակա

ցու չգիտիցէ լինել, զնարդ եկեղեցւոյ
այ խնամակալ լինիցի։ * Արի մատաղ 6
տունկ, զի մի՛ հպարտացեալ՝ի դատաս
տանս սատանայի անկանիցի։ * Ա՛յր 7
պարտ է նմա վկայուն բարւոյ և յարտաք
նոցն ունել, զի մի՛ ի նախատինս անկա
նիցի՝ և յորոգայթս սատանայի։ * Կայն 8
պէս և զսարկաւագունս պարկեշտս, մի՛
երկբանս, մի՛ գինեսէրս, մի՛ զօշաբաղս։
* այլ ունիցին զխորհուրդ հաւատոցն 9
սուրբ մեծաց։ * ինքեանք նախ փորձեսս 10
ցին, և ապա՝ ի պաշտօնն մատիցեն, զի
անարատք լիցին։ * Նոյնպէս և կանայք 11
նոցա պարկեշտք. մի՛ չարախօսք, հեզք՝ հա
ւատարիմք ընդ ամ։ * Սարկաւագք լինիցեն 12
միոյ կնոջ արք. որք որդւոց իւրեանց
բարւոյք վերակացու լեալ լիցեն, և տանց
իւրեանց։ * զի որ բարւոյն պաշտիցեն, 13
աշտիճան բարւոյ անձանց իւրեանց շահեն,
և բազում համարձակութիւն՝ի հաւատսն՝
որ՝ի քրիստոս։
* Զայս գրեմ առ քեզ, զի ակնուսիմ 14
՝ի մօտոյ գալ։ * Այլ թէ յամեցից՝ զի 15
գիտասցես, թէ որպէս պարտ իցէ քեզ
՝ի տան աստուծոյ շրջել. որ է եկեղեցի աստ կեն
դանւոյ, սիւն և հաստատուած ճշմարտ
ութեան։ * Եւ յայտնի իսկ մեծ է խոր 16
հուրդն աստուածութեան. որ երևեցաւ մարմ
նով՝ արդարացաւ հոգւովն՝ յայտնեցաւ
հրեշտակաց՝ քարոզեցաւ՝ի հեթանոսս՝

Հաւատարիմ եղև յաշխարհի՝ և վերա-
ցաւ փառօք ։

ԳԼ՚ · Գ ։

1 Ա՚Յլ Հոգին աՀք յայտնապէս ասէ · թէ Ա՚Ջ
ի ժամանակս յետինս՝ քակեսցին ոմանք ՚ի Հաւատոյն , և Հպարտացին յայս մոլորուածս , և՚ի վարդապետուածս դիւաց ,
2 * կեղծաւորութիւնք ստաբանք , խարեալք
3 իւրեանց խղճիւն մտաց ։ * որ արգելուցուն յամուսնանալոյ , և մեկնիցեն ՚ի կերակրոց՝ զոր Աստ Հաստատեաց ՚ի վայելել Հաւատացելոց , և ոյք Հասեալ իցեն
4 ՚ի ճշմարտութեն վէր ։ * Զի ամ արարած ոչ՝ բարի են , և չի՛ք ինչ խոտան ·
5 մանաւանդ որ գոՀութիւն ընդունիցին ։ * զի
6 սրբի բանիւն ՚ոյ՝ և աղօթիւք ։ * Զայս Խրատ տուեալ եղբարց , բարւոք պաշտօնեայ լինիցիս քրիստոսի , սնանիցիս բանիւք Հաւատոց , և բարւոք վարդապետութեանն՝ զորոյ կՀետեան իսկ եղեր ։ * Զ՚ՀԻ
7 ՚ի պիղծ բանից՝ և յառասպելաց պառաւանց Հրաժարեսջի՛ր ։ Խայց կրթեա զանձն քո յաշխատասիրութիւն ։ * զի մարմնոյ
8 կրթութիւն առ սակաւ ինչ օգտակար է · իսկ աշխատասիրութիւն առ ամ ինչ օգտակար է , և զաւետիս կենաց ունի՝ զարդիս և
9 զՀանդերձելոցն ։ * Հաւատարիմ է բա-
10 նդ և ամ ընդունելութե արժանի է ։ * զի ՚ի սոյն իսկ վաստակեմք՝ և նախատինս

յանձն առնուսք ։ զի յուսացեալ եմք
յՅԱԾ կենդանի , որ է փրկիչ ամ մարդ-
կան , մանաւանդ հաւատացելոց ։ * Պա- 11
տուիրեր տալիր զայդ՝ և ուսուցանիցէր ։
* զի մի՛ ոք զքո մանկութիւդ արհամար 12
հիցէ ։
Ա՛յլ օրինակ լինիցիր հաւատացելոց՝
բանիւք՝ գնացիւք՝ սիրով հաւատովք սըր
բութ ։ * Մինչև գամ ես , միտ դիր ընդ 13
թերցուածոց ինձիմաստուն՝ վարդապե-
տութեն ։ * Այլ անփոյթ առներ զշնորհս 14
հացդ՝ որ ի քեզ են , որ առաւ քեզ
մարգարէութբ ի ձեռնադրութէ երիցուն ։
* Յայդ խորհեաց՝ և ի դմին կանխեա- 15
ջիր ։ զի քո յառաջադիմութիդ ամենե-
ցուն յայտնի լիցի ։ * Զգոյշ լիցիր ան- 16
ձին և վարդապետութեդ՝ և ի դմին յա-
ճախիր ։ զայդ եթէ առնիցես՝ և զանձն
ապրեցուսցես , և զայնոսիկ՝ որ քեզ լո
սիցեն ։

ԳԼ ։ Ե ։

Ծերն մի՛ պատուհասեսցես , այլ միսի 1
թարեսիցիր իբրև զհայր , վերինսա-
արդս իբրև զեղբարս , * զպատուականս 2
իբրև զմայրս , զմանկամարդս իբրև զե-
ղբարս՝ ամենայն սրբութբ ։ * Այրիս պա- 3
տուեա , որ առոյգ այրիքն լիցին ։ * Պա- 4
թէ ոք այրի՝ որդիս և թոռունս առնիցէ ,
ուսանիցին նախ իւրեանց առանց բարի

առնել՝ և զիսկարկինս հատուցանել ծը-
նողացն . զի այն է քաւիլ՝ և ընդունելի
առաջի նոր : * Իսկ որ ձշմարտիւ այրին
էիցէ . և մենացեալ յուսացեալ յԱստ , և
կանխեալ յաղօթս և՛ի խնդրուածս ըզ-
ցայգ և զցերեկ : * Իսկ զիրգ այրին՝ կեն
դանացն մեռեալ է : * զայս պատուիրէ
րեան՝ զի անարատք էիցեն : * Իսկ եթէ ոք
իւրոց՝ և մանաւանդ ընտանեացն խնամ
ոչ առնիցէ , ՚ի հաւատոցն ուրացեալ է՝
և չար ևս քան զանհաւատան է : * Այրի
ըն այրիս անուանեսցի , որ չիցէ պակաս
՚ի վաթսնամենից , միոյ առն կնի լեալ .
և՚ի գործս բարիս վկայել , եթէ մանկ
կունս սնուցեալ էիցէ , եթէ զհիւրս ըն-
կալեալ էիցէ , եթէ զսրբոց զոտս լուա-
ցեալ էիցէ , եթէ նեղելոց բաւական լեալ
էիցէ , եթէ զամ գործոց բարեաց զհետ
երթեալ էիցէ : * Այլ՚ի մանկամարդաց
այրեացն հրաժարեա , զի յորժամ խոց-
տան զքրիստ՝ ամուսնանալ կամին . * իսկ
զդատաստանս ընդունին , զի զառաջին
հաւատոյն արհամարհեցին : * Ա՛նան-
գամսյն և դատարկանաձունք ուսանին՝
շրջօղք տանէ ՚ի տուն . և ոչ միայն գա-
տարկք , այլ և փսսքուսք և հետաքրը-
քիրք . և խօսին՝ որ ինչ ոչ է պիտոյ : * Կա-
մի՛ զմանկամարդացդ ամուսնանալ , որ
դիս ծնանել , անարատս լինել , և մի՛ ինչ
պատճառս տալ հակառակորդին ՚ի հայ-

Հոյուբ աղաղակ ։ * զի արդէն իսկ ամենք 15
խառնեցան զկնի սատանային ։ * Այլ 16
ոք հնազանդեալ այրիս ուսինցի՝ բաւա
կան լինի նոցա , և մի՛ ծանրասցի եկե
ղեցւոյն ։ զի ձգնարիսի այրեացն բաւա
կան լինիցի ։

ԲԴ * Որ բարւոք վերակացու լինին երիցունք 17
կրկին պատուոյ արժանի եղիցին ։ մանա
ւանդ որ աշխատիցին քարոզել և վարդա
պետութիւն ։ * քանզի ասէ գիր ։ մի՛ կա 18
պեացես զցուլ եղեան կալոցոյ ։ և արդ
ժանի է մշակն վարձու իւրոյ ։ * Երէց 19
ցուէ չարախօսուի մի ընդունիցիս ։ բայց
եթէ երկուք՝ և երիւք վկայիւք ։ * Զսկ 20
որ մեղանչեն՝ առաջի ամենեցուն յան
դիմանեա , զի և այլքն երկիւղեն ։ * Զկայ 21
ուի դնեմ առաջի աց և յԱստուածոյ և քրիս
տոսէ հրեշտակաց , զի զայդ պահեսցես
առանց մտահաճուե ։ մի՛ ինչ առնել ա
չառնօք ։ * Զձեռս վաղվաղակի յուրուք 22
վըր մի՛ դնիցես , և մի՛ կցորդ լինիցիս մե
ղաց օտարաց ։ զանձն քո սուրբ պահես
Ջի՛ր ։ * Զկայուհետև մի՛ ջուր և եթէ ըմ 23
պիցես՝ այլ սակաւիկ մի և գինի խառ
նեալ ընդ ջրի՛ր վըր ստամոքսի և ստէպ հիւան
դութեց ։ * Զոմանց մարդկ՝ որոց մեղքն յայտնի 24
են՝ և յառաջագոյն հասեալ ի դատաս
տան , և են՝ որոց զկնի երթան ։ * Զոմանց 25
և բարի գործքն յայտնի են ։ և որ այլ
ազգ ևս ինչ լիցեն՝ թաքչել ոչ կարեն ։

ԳԼ· Ը՛

1 Ա՛ր միանգամ՛ ել լծով ծառայուէ իցեն,
զնւբաքանչիւր տեառս պատուի արժանի համարեսցին· զի մի՛ անուն այ-
2 և վարդապետուին հայհոյեսցի· * [1]ոկ որ հաւատացեալ տեառս ունիցին՝ մի՛ արհամարհեսցեն, զի եղբարք են· այլ առաւել ծառայեսցեն՝ զի հաւատացեալք են և սիրելիք· որք զբարերարուի յանձինս ունիցին՝ զայս ուսուցանիցէք և
3 մխիթարեսջի՛ր· * [2]ոկ եթէ ոք այլազգի՛ ուսուցանիցէ՝ և ոչ անսայցէ ողջմտուէ բանի տն մերոյ յիսուսքրիստոսի, և ըստ
4 ծ պաշտուէ վարդապետուէն· * այնպիսին հպարտացեալ է, և ոչինչ ոչ դիտէ· այլ տապի՛ ի խնդիրս և՛ ի բանս հակառակութե՛ն· ուստի լինին նախանձ
5 հեռ հայհոյուի՛ կարծիք չարեաց· * խառնակութի՛ք ապականելոց մտաց մարդկան՝ և օտարացելոց ի՛ ճշմարտուէ անտի, որ շահավաճառ համարին զաշխատուէն· բայց դու մերժեսջի՛ր յայնպիսեացն·
6 * [3]այլ շահավաճառ մեծ աշխատուի
7 է՝ բաւականուէ հանդերձ· * զի ոչ բե
8 րաք ինչ յաշխարհս՝ և ոչ տանել ինչ
9 կարասցուք· * այլ ունիմք կերակուր և հանդերձս, և այնու շատասցուք· * [4]ոկ որք կամին մեծանալ՝ անկանին ի փոր-

ձուլթի և յորդայթ, և՛ի բազում ցան-
կուէս անպիտս և վնասակարս. որք ընկղ-
մեն զմարդիկ ի սատակումն և ի կո-
րուստ: * Օ՛ն արմատ ամենայնց չա-
ծանիսրութի է. որում մանկ ցանկա
ցեալ՝ վրիպեցան ի հաւատոյն, և զանձ
ինս սրկին ընդ բազում ցաւովք: * Ա՛յլ 11
դու, ով մարդ աստ՝ փախիր յայնցանէ, և
երթ զհետս արդարութե՛ն՝ ճշմարտութե՛ն
հնաւատոյ զսիրոյ զհամբերութե՛ն զհե-
զութե՛ն: * Եւ մարտիր զբարւոք մարտն 12
հաւատոյ, և բռունն հար զկենացն յա-
ւիտենականաց՝ յոր կոչեցարն, և դա-
ւանեցեր զբարւոք դաւանութի՛ն առաջի
բազումս վկայից: * Պատուիրեմ քեզ ա- 13
ռաջի աստ՝ որ կենդանի առնէ զամենայն,
և յիսուքէ՝ որ վկայեաց առաջի պոնտաց
Պիղատոսի զբարւոք դաւանութի՛ն:
* պահել քեզ զպատուիրանն անբիծ՝ 14
անարատ, մինչև ի յայտնութի՛ն Տն մերոյ
յիսուքէ: * զոր ի իւր ժամանակս ցու- 15
ցէ երանելին՝ և միայն հզօր, թագաւոր
թագաւորաց և Տէր տերանց: * որ միայն 16
ունի զանմահութի՛ն՝ բնակեալ ի լոյս ան-
մատոյց. զոր ոչ ոք եհետս ի մարդկանէ՝
և ոչ տեսանել կարօղ է. որում պատիւ
և զօրութի՛ն յաւիտեանս, ամէն: * Ա՛ն- 17
ծատանց՝ որ ին յայսմ աշխարհի՝ պատ-
ուէր տացէր մի՛ հպարտանալ և մի՛ յու-
սալ ի մեծութի՛ն մնոտի, այլ յԱ՛ստ՝ որ

տայ մեզ զայմ առաւտապէս ի վայելել,
18 * զբարիս գործել, մեծանալ գործովք
բարութե, առաւտս սիրունս հալոցդա լի
19 նել. * գանձել անձանց հիմն բարի ի
հանդերձեալսն. զի բռնեսցեն հարկենից
20 զմարթիսն կենացն։ * Ո՛վ տիմոթէ՛
պահեա զաւանդն՝ խոտորեալ ի պղծու
եւ ի նորաձայն բանից եւ ի հակառակու
21 թէ եւ ի մոլարանուն գիտութէ. * զոր
ոմանք յանձն առեալ՝ վրիպեցան ի հա
ւատոց անտի։ Շնորհք ընդ քեզ։ ամէն։

Ա՛ռ պիմոլիքոս առաջին գրեցար ի
ղաոդիկէացւոյ, որ է նայր դաշտոց պահապան
նոցա։

ԹՈՒՂԹ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔՅԱԼՈՑ
ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ ԵՐԿՐՈՐԴ.

ԳԼ. Ա.

ԳԿ

ՕՂՈՍ ԱՌԱՔՅԱԼ 1
յէն քէն կամօքն այ , ըստ
աւետեաց կենացն՝ որ ի քր
յս : * Զհամբեալ որդւոյ 2
սիրելւոյ՝ շնորհք ողորմութի՛ւն և խաղաղ
ութի՛ւն յայլ հօրէ՝ և ի քէն յէն տէրէ
մէ : * Շ նորհ ունիմ այ՝ զոր պաշտեմն 3
ի նախնեաց՝ մտօք սրբովք , եթէ զի անդ
ադադա ունիմ զքէն յիշատակ յաղօթս
իմ. զցայգ և զցերեկ . * ցանկացեալ եմ 4
տեսանել զքեզ , յիշատակեալ զարտա
սուսն քո՝ զի լցայց ուրախութի՛ւն . * ընդ 5
մտաս աճեալ զանխիղճ հաւատոն՝ որ
ին ի քէզ . որ յառաջագոյն բնակեցաւ
ի տանդ քումմէ լուդեայ , և ի մօր քումմ
եւնիկեայ . հաստատեալ եմ թէ և ի
քէզ է : * Ա յդ յիշեցուցանեմ քեզ ար 6
ծարծել զշնորհսն այ՝ որ են ի քէզ ի
ձեռնադրուե իմմէ : * Ո՛չ եա մեզ 7
աճ հոգի վհատուե , այլ զօրուե և սի
րոյ՝ և զգաստութի՛ւն : * Ա՛ի այսուհետև 8

ամօթ համարիցին զվկայսն ՚ի ՄՐոց՝
և մի՛ զնս զկապել ՚ն ը, այլ կցծրդ լեր
չարչարանաց աւետարանին՝ ըստ զօրութեն
9 այ։ * Որ փրկեաց զմեզ, և կոչեաց ՚ի
կոչումն սրբ ոչ ըստ գործոց մերոց՝ այլ
ըստ իւրում յառաջադրութեն և շնորհաց,
որ տուաւ մեզ ՚ի քրս յս յառաջ քան զժա
մանակս յաւիտենից։
10 * Իսայց յայտնեցաւ այժմիկ յերևել գ
փրկչին մերոյ յսի քրսէ. որ խափանեաց
զմահ՝ և լուսաւորեաց զկեանս և զա
11 ներձուածն ՚ի ձեռն աւետարանին։ * որոյ
եդայ ես քարոզ և առաքեալ՝ և վարդա
12 պետ հեթանոսաց։ * Որ սոյն որոյ և զայս
չարչարանս կրեմ, այլ ոչ ինչ ամօթ հա
մարիմ. քանզի գիտեմ՝ յո հաւատացեալ
եմ. և համոզեալ եմ, թէ կա
րող է զաւանդն իմ պահել յօրն յայն։
13 * Ունելով օրինակ առողջաբանեցն զոր
զոր լուար՝ հաւատովք և սիրով
14 որ ՚ի քրս յս։ * Զ բարւոք աւանդն պահ
հեռնոր ՚ի ձեռն Հոգւոյն որ ՚ի մեզ բնա
15 կեալ։ * Զայս գիտացեալ՝ զի մերկան
ցան ՚ի մէնջ ամենեքեան որ ՚ի նմա յասիա,
որոց սակաւ ևս փիղեղոս և Հերմոգենէս։
16 * Տացէ տէր ողորմութիւն տանն Ոնէսիփո
րայ. զի զբազմանգամ Հանգոյց զիս, և ըղ
կապանս իմ ոչ ամօթ համարեցաւ։ * այլ
17 իբրև եկն ՚ի Հռոմ, աղուադոյնս խնդ
18 րեաց զիս՝ և եգիտ։ * Տացէ նմ տէր՝ ողոր

մուէ գտանել ի նոնէ յաւուրն յայնմիկ. և որչափ ինչ միանգամ յերիեսս սպաս կալաս լինել, զայն դու ինքնին քաջ գիտես։

ԳԼՈՒԽ Ա։

Ա. Յիւդա որդեակ իմ, զօրացիր ընդ 1
հօգն՝ որ ի քէն կայ։ * Եւ զոր լուար 2
յինէն բազում վկայութիւք՝ զայն աւանդեա
ցես հաւատարիմ մարդոց՝ որք բաւա
կան իցեն և զայլս ուսուցանել։
Գ.Ա. * Համակից լեր իբրև զբարւոք զինուո՛ր 3
քրիստոսի։ * Եւ ո՛ք զինուորեալ աստէն ընդ 4
կեանս աշխարհիս պատահի, եթէ զօրա
վարին հաճոյ լինիցի։ * և եթէ մարտիկ 5
ոք իցէ, ոչ պսակի՝ եթէ ոչ լսատ օրինին
մարտիցէ։ * Եւ հողագործքն աշխատեա 6
լոյ պարտ է նախ ի պտղոյն վայելել։ * Ի 7
մա՛ զինչ ասեմն, տացէ քեզ տէր իմաստութի
իւն։ * Յիշեա՛ զքո՛ն յիսուս յարուցեալ ի մե 8
ռելոց ի զաւակէ դաւթի՝ ընդ աւետարա
նիս իմում։ * յորում չարչարիմ կապանօք 9
քաւի իբրև զչարագործ։ այլ բանն աստ ոչ
եթէ կապեալ իցէ։ * Ա՛ ընդորիկ ամե 10
նայնիվ համբերեմ վա՛ ընտրելոցն, զի և նոքա փրկու
